

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ կրթության և գիտության

նախարար՝

Ա. Աշոտյան

«_____» _____ 2009 թ.

ՀՀ պետ. գրանցման թ. _____

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉ

Մասնագիտությունը՝ 310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
դասիչ, անվանում

*Որակավորման
աստիճանը՝*

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավր
անվանում

Ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

Ե Ր Լ Ա Ն 2 0 0 9

1. 310301 ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
դասիչ, մասնագիտություն

ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. 310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն
դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության
2007 թ. օգոստոս -ի 30 -ի թ. 1038-Ն որոշմամբ:

1.2. *Շրջանավարտի որակավորումը* Անասնաբուժական սանիտարական փորձաքննության
անվանում
բակալավր

310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտությամբ
դասիչ, մասնագիտության անվանում

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի հիմնական կրթական
անվանում

ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4 տարի 10 ամիս է:

1.3. *Շրջանավարտի որակավորման բնութագիրը.*

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրը
անվանում

բուհն ավարտելուց կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները.

1. Տարածքային անասնաբուժական սպասարկման կենտրոնի տնօրեն,
2. Անասնաբուժական լաբորատորիայի վարիչ,
3. Անասնաբուժական սանիտարական փորձաքննության լաբորատորիայի վարիչ,
4. Գյուղապետ,
5. Սահմանային հսկիչ անասնաբուժական կետի վարիչ,
6. Կենդանական ծագման մթերքների վերամշակման, իրացման և պահպանման ձեռնարկությունների անասնաբույժ-փորձագետ:

1.3.1. *Մասնագիտական գործունեության բնագավառը.*

310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտությունը
դասիչ, մասնագիտության անվանում

վերաբերվում է գիտության (տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման և այլն) այն բնագավառին, որը ներառում է մարդկային գործունեության եղանակների, միջոցների և մեթոդների այն ամբողջությունը, որն ուղղված է.

- սանհիտարահիգիենիկ պահանջներին համապատասխանող կենդանական ծագման մթերքների ստացման,
- կենդանական և բուսական ծագման մթերքների և հումքի որակի հսկողության եղանակների,
- մարդու և կենդանիների համար ընդհանուր հիվանդությունների կանխարգելմանն ուղղված միջոցների,
- ազգաբնակչությանը անվտանգ սննդամթերքի մատուցման պայմանների ստեղծմանը, կիրառմանը և գիտագործնական խնդիրների լուծմանը:

1.3.2. Մասնագիտական գործունեության օբյեկտները.

1. Գյուղատնտեսական, ընտանի և վայրի կենդանիները, թռչունները, գազանները, մեղուները, ձկները: 2. Կենդանիների, կենդանական ծագման մթերքի և հումքի ստացման և իրացման վայրերը: 3. Կենդանական ծագման մթերքի և հումքի պահպանման սառնարանները: 4. Դիզինֆեկցիայի (ախտահանման), դեզինսեկցիայի և դեռատիզացիայի ենթակա անասնաշենքերը, անասնաբակերը: 5. Կաթի, մսի վերամշակման ձեռնարկությունները, 6. Կենդանական ծագման տեխնիկական հումքի վերամշակման ձեռնարկությունները: 6. Հսկիչ կարանտինային կետերը: 7. Անասնաբուժական լաբորատորիաները:

1.3.3. Մասնագիտական գործունեության տեսակները.

310301 Անասնաբուժական սանհիտարական փորձաքննություն մասնագիտությամբ
դասիչ, մասնագիտության անվանում

Անասնաբուժական սանհիտարական փորձաքննության բակալավրը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված հիմնարար և մասնագիտական պատրաստությանը համապատասխան կարող է կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝

1. կենդանական և բուսական ծագման մթերքի և հումքի սանհիտարական փորձաքննություն և համապատասխան գնահատում,
2. կենդանիների և թռչունների վարակիչ ու ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելում և բուժում,
3. գիտահետազոտական:

1.3.4. Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները.

310301 Անասնաբուժական սանհիտարական փորձաքննությունը մասնագիտությամբ

որակավորման աստիճան

Անասնաբուժական սանհիտարական փորձաքննության բակալավրը՝ կախված

որակավորման աստիճան

մասնագիտական գործունեության տեսակից, պետք է պատրաստ լինի լուծելու հետևյալ մասնագիտական խնդիրները.

ա/ մասնագիտական գործունեության՝

- պլանավորել կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելիչ միջոցառումների ընթացիկ օպերատիվ և հեռանկարային պլաններ, կազմակերպել պլանային միջոցառումների անցկացում (դիսպանսերացիա), պատրաստել կենդանիների հիվանդությունների կանխարգելման և բուժման կենսաբանական և քիմիական պատրաստուկներ,
- կատարել կենդանիների վիրահատումներ, ծննդօգնություն, անասնաբուժասանհիտարական փորձաքննություն, հիվանդությունների ախտորոշում, բուժում, հիվանդությունների մանրէաբանական, արյունաբանական, շիճուկաբանական, կենսաբանական, հելմինթոլոգիական հետազոտություններ,
- ձեռնարկել և կազմակերպել կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի միջոցառումներ,
- աշխատել անասնամթերքի վերամշակման արտադրամասերում

բ/ փորձարարական-հետազոտական գործունեության՝

- բնագավառի գիտահետազոտական հիմնախնդրի վերլուծություն, առաջադրանքի ձևակերպում, հետազոտության նպատակի և խնդիրների առաջադրում, գրական և պատենտային աղբյուրների ուսումնասիրման և ընտրության հիմքով,
- հետազոտության թեմայով գիտատեխնիկական ինֆորմացիայի վերլուծություն, համակարգում և ընդհանրացում օգտագործելով արդի ինֆորմացիոն տեխնոլոգիաները,
- մասնագիտական գործունեությունում և այլ ոլորտներում (հետազոտական, արտադրական, կառավարման, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական, հումանիտար և այլն) հետազոտվող գործընթացների և երևույթների գնահատման համար մաթեմատիկական մոդելների և մեթոդների, համակարգչային տեխնոլոգիաների մշակում և ներդրում,
- իրականացված հետազոտությունների գիտագործնական նշանակության վերլուծություն և մշակումների տեխնիկատնտեսական արդյունավետության գնահատում,

- հետազոտության արդյունքները գիտական մամուլում հրատարակման նախապատրաստում, ինչպես նաև ելույթների, ռեֆերատների, գիտական ակնարկների և հաշվետվությունների ձևակերպում,

զ/ կազմակերպական-կառավարչական գործունեության`

- մասնագիտական գործունեության օբյեկտների մշակման և հետազոտման գործընթացների, ինչպես նաև դրանք իրականացնող կոլեկտիվների աշխատանքի ծրագրավորում և կազմակերպում` անհրաժեշտ որակով և տրված ժամկետներում,
- նշված գործընթացների իրականացման համար կազմակերպական մեթոդների, ինչպես նաև տեխնոլոգիական, ծրագրային և գործիքային միջոցների ընտրություն,
- նույն գործընթացների որակի գնահատում, կառավարում և վերահսկում, ինչպես նաև դրանց իրականացման շրջանակներում անձնակազմի ուսուցում և վերաորակավորում,
- ստացված արդյունքների ներդրման գործընթացի ծրագրավորում և կազմակերպում:

1.3.5. Որակավորման պահանջները.

Մասնագիտական խնդիրները լուծելու նպատակով Անասնաբուժակա սանիտարական
որակավորման աստիճան

փորձաքննության բակալավրը կատարում է հետևյալ գործառնությունները`

- կատարում է կենդանական և բուսական ծագման մթերքների անասնաբուժա-սանիտարական հետազոտություն,
- տալիս է եզրակացություն` կենդանական և բուսական ծագման մթերքների սանիտարահիգիենիկ վիճակի վերաբերյալ,
- կանխում է անասնապահական մթերքի և տեխնիկական հումքի միջոցով մարդկանց վարակումը անտրոպոզոոնոզ հիվանդություններով
- թույլատրում է վաճառքի մարդու առողջության համար անվտանգ կենդանական և բուսական ծագման սննդամթերքները և սանիտարահիգիենիկ պահանջներին չհամապատասխանելու դեպքում արգելում վերոհիշյալ սննդամթերքների վաճառքը,
- կանխում է սպանդի մթերքի և զանազան թափոնների միջոցով վարակիչ և ինվազիոն հիվանդությունների տարածումը,
- պահպանում է հանրապետությունը հարևան երկրներից վարակի ներթափանցումից,
- իրականացնել անասնաբուժասանիտարական վիճակի հսկողություն կենդանական ծագման մթերքի և հումքի վերամշակման ձեռնարկություններում,
- մասնակցում է անասնապահական տնտեսությունների մասնագիտական խնդիրների

առաջադրման, ծրագրերի կազմման և լուծմանն ուղղված աշխատանքների բոլոր փուլերին,

- կազմակերպում է նյութերի, միջոցների, սարքավորման, տեխնոլոգիական գործընթացների արդյունավետ օգտագործման գործառնություններ,
- մասնակցում է անասնաբուժական սանիտարական փորձաքննության
բնագավառ գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման, իրականացման և արդյունքների մշակման բոլոր փուլերին,
- ուսումնասիրում է անասնաբուժական սանիտարական փորձաքննությանը առնչվող
բնագավառ մասնագիտական գրականությունը և գիտատեխնիկական ինֆորմացիան, ծանոթ է բնագավառի գիտատեխնիկական նորություններին և նվաճումներին,
- օգտվում է անասնաբուժական սանիտարական փորձաքննության և անասնապահության բնագավառի համակարգչային ինֆորմացիոն տեխնոլոգիաներից, տվյալների բազաներից, փորձագիտական համակարգերից և կիրառական ծրագրերի փաթեթներից,
- կազմակերպում է իր ենթակայության ստորաբաժանման աշխատանքը:
- ձևակերպում և լուծում է մասնագիտական, կազմակերպական-կառավարչական, գիտահետազոտական և գիտամանկավարժական գործունեությունում ծագած բոլոր խնդիրները,
- մասնակցում է իր մասնագիտական գործունեությանն առնչվող գործընթացների և ընթացակարգերի բոլոր փուլերին,
- իրականացնում է իր մասնագիտական գործունեության հետազոտական թեմաներով գիտատեխնիկական ինֆորմացիայի հավաքում, մշակում, համակարգում և վերլուծում՝ օգտագործելով արդի ինֆորմացիոն տեխնոլոգիաներ,
- իր մասնագիտական գործունեության ոլորտում հետևողականորեն ուսումնասիրում է մասնագիտական գրականությունը, գիտատեխնիկական ինֆորմացիան, ծանոթ է հանրապետական և միջազգային գիտության և տեխնիկայի նվաճումներին,
- մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում համագործակցում է իր և հարակից մասնագիտությունների հետ, ծանոթ է մշակումներ և հետազոտություններ կատարողների աշխատանքի կազմակերպման և կառավարման գործընթացներին,
- կարող է գիտականորեն կազմակերպել իր աշխատանքը և տիրապետում է իր մասնագիտական գործունեությունում օգտագործվող ինֆորմացիոն տեխնոլոգիաներին,
- ընդունակ է գիտատեխնիկական զարգացման արդի փուլում և հարափոխ սոցիալական իրավիճակներում իր հնարավորությունների վերլուծությանը և վերագնահատմանը, նոր գիտելիքների ձեռքբերմանը, հոգեպես և մեթոդական

տեսակետից պատրաստ է իր մասնագիտական գործունեության ձևի և բնույթի փոփոխմանը, միջոցառնթացային նախագծերի վրա աշխատանքին,

- պատրաստ է կազմելու իրականացրած հետազոտության նկարագրությունը, մշակելու և վերլուծելու ստացված արդյունքները, դրանք ներկայացնելու գիտական ակնարկների, ռեֆերատների, ելույթների, հաշվետվությունների և գիտական հոդվածների տեսքով,
- պատրաստ է մասնակցելու մշակված գիտատեխնիկական նախագծերի և հետազոտությունների ներդրման աշխատանքներին, իրականացնելու մասնագիտական գործունեության օբյեկտների պատրաստման, փորձարկման և հանձնման հեղինակային վերահսկողությանը,

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրը պետք է ծանոթ լինի՝

- անասնաբուժա-սանիտարական գործունեության բնագավառին առնչվող իրավական ակտերին, որոշումներին, կարգադրություններին, մեթոդական և նորմատիվային նյութերին,
- գործող չափորոշիչներին, բնագավառի սարքավորման, ինֆորմատիկայի միջոցների տեխնիկատնտեսական ցուցանիշներին, տեխնոլոգիաներին, դրանց շահագործման կարգացույցներին,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքով ստացված տվյալների ներկայացման, հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի կազմման եղանակներին,
- աշխատանքային օրենսդրության հիմունքներին, աշխատանքի պաշտպանության նորմերին և կանոններին:

1.3.6. Մասնագիտական հարմարման հնարավորությունը

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրը կարող է

որակավորման աստիճան

հարմարվել հարակից մասնագիտական գործունեության հետևյալ տեսակներին՝ բժշկական գիտահետազոտական հիմնարկներ (լաբորատոր գիտահետազոտական կառույցներ), պոլիկլինիկաների և հիվանդանոցների լաբորատորիաներ, ախտահանիչ և հակաժանտախտային կայաններ:

1.4. Երջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը

310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

բարձրագույն մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու՝

- կրճատված ժամկետներում ստանալու բակալավրի որակավորման աստիճան 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում՝ ստանալու Անասնաբույժ փորձագետ մագիստրոսի որակավորման աստիճան,
- ասպիրանտուրայում (միայն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հետո) ստանալու գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2. ԴԻՄՈՐԴԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

2.1. Դիմորդի նախորդող կրթական մակարդակը՝
միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթության:

2.2. Դիմորդը պետք է ունենա՝
պետական նմուշի վկայական միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության, կամ միջին մասնագիտական կրթության, կամ նախնական մասնագիտական կրթության մասին, որում կա գրառում դիմորդի միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ստանալու մասին, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին:

3. 310301 ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ
դասիչ, մասնագիտություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
որակավորման աստիճան

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

3.1. Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման
որակավորման աստիճան

հիմնական կրթական ծրագիրը մշակվում է սույն պետական կրթական չափորոշիչով և ներառում է՝ մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման
որակավորման աստիճան

հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

3.3 Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման
որակավորման աստիճան

հիմնական կրթական ծրագիրը ձևավորվում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացները և մասնագիտացման ծրագրերը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում բովանդակորեն պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացները:

3.4. Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման
որակավորման աստիճան

հիմնական կրթական ծրագիրը պետք է նախատեսի հետևյալ կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը՝

1. Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական՝ ՀՍՏ,
2. Ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական՝ ԸԲ,
3. Ընդհանուր մասնագիտական՝ ԸՄԴ,
4. Մասնագիտացման՝ ՄԴ,

5.Ֆակուլտատիվ՝

Ֆ,

ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը:

3.5. Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի մասնագիտացված
որակավորման աստիճան

պատրաստման ծրագրի բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված որակավորման բնութագրի համաձայն:

Բուհական բաղադրիչում ընդգրկված դասընթացները երաշխավորական բնույթ են կրում:

4. 310301 ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

դասիչ, մասնագիտություն

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

որակավորման աստիճան

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ
ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

| Դասընթացների անվանումը և նրանց հիմնական բաժինները | կրե- դիտ | Ժամեր |
|---|-------------|-------|
| 1 | 2 | 3 |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱՔԼՈԿ | | |
| <i>Հանրապետական բաղադրիչ</i> | | |
| Ֆիզիկական կուլտուրա | | 216 |
| Ֆիզիկական կուլտուրան ուսանողների ընդհանուր կուլտուրական և մասնագիտական պատրաստվածության գործընթացում: Նրա սոցիալ-կենսաբանական հիմքերը: Ֆիզիկական կուլտուրան և սպորտը որպես հասարակական երևույթներ: ՀՀ օրենսդրությունը ֆիզիկական կուլտուրայի մասին: Անհատի ֆիզիկական կուլտուրան: Ուսանողի առողջ կենսակերպի հիմքերը: Աշխատունակության օպտիմալացման նպատակով ֆիզիկական կուլտուրայի միջոցների օգտագործման առանձնահատկությունները: Ընդհանուր ֆիզիկական և հատուկ պատրաստությունը ֆիզիկական դաստիարակության համակարգում: Սպորտի կամ ֆիզիկական վարժությունների համակարգի անհատական ընտրություն: Ուսանողների մասնագիտական-կիրառական ֆիզիկական պատրաստություն: Ինքնուրույն պարապմունքների մեթոդիկայի հիմունքները և սեփական օրգանիզմի վիճակի ինքնավերահսկումը: | | |
| Հայոց լեզու և գրականություն | 4 | 120 |
| Լեզվի հիմնական գործառությունները. լեզուն որպես մարդկային մտածողության արտահայտման ու մտքերի ձևավորման միջոց, որպես հաղորդակցության միջոց, որպես մշակութային արժեքների ստեղծման, պահպանման ու կուտակման միջոց, որպես հասարակական-քաղաքական միտումների կրող: Աշխարհի լեզուները և լեզվաընտանիքները, հայոց լեզվի տեղը հնդեվրոպական լեզվաընտանիքում: Հայոց լեզվի զարգացման պատմական շրջանները (գրաբար, միջին հայերեն, ժամանակակից հայոց լեզու՝ արևելահայ և արևմտահայ գրական լեզուներ): Հայոց գիրը և գրչությունը: Մեսրոպյան այբուբենի ստեղծման համազգային պատմական նշանակությունը: Ուղղագրության, կետադրության և ուղղախոսության ժամանակակից համակարգերը որպես գրավոր և բանավոր խոսքի կարևորագույն չափանիշներ: Խոսքի կուլտուրայի հիմքերն ու բաղկացուցիչները. ոճաբանություն և ճարտասանական արվեստի հիմունքները: Ժամանակակից հայերենում ոճի հիմնական տեսակների բնութագրումը. գործառական, իրադրական և անհատական ոճեր: Գարտասանական արվեստի պատմության և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ: | | |
| Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ | 4 | 120 |
| Անհատական խոսքի և երկխոսության, ընթերցելու և գրելու, ընկալման և խոսակցական ունակությունների ձևավորումը և զարգացումը: | | |

| | | |
|--|----------|------------|
| <p>Գործառնական-ինաստաբանական հիմքի վրա խմբագրված քերականական գիտելիքների ուսուցումը դիդակտիկ սկզբունքների և ուսումնական նյութի բաշխվածության հաշվառմամբ: Նվազագույնի հասցված բառային-քերականական նյութի մատուցումը: Ուսուցանվող լեզվի երկրի մշակույթը և ավանդույթները: Խոսքի բարեկանոնության տարբեր միջոցների կիրառումը որոշակի իրավիճակներում: Խոսելու ունակությունը. անհատական խոսքի և երկխոսության կազմակերպումը օգտագործվող պարզ բառային-քերականական միջոցների կիրառմամբ: Հրապարակային խոսքի հիմունքները (բանավոր հաղորդում, զեկույց և այլն): Խոսքի ընկալումը. անհատական խոսքի և երկխոսության ըմբռնումը կենցաղային և մասնագիտական հաղորդակցման ոլորտներում: Ընթերցանություն. տեքստերի տեսակները, ոչ բարդ տեքստեր և մասնագիտական ուղղվածության տեքստեր: Գրավոր խոսքի ունակություն. համառոտագրում, ռեֆերատ, հաղորդում, դրույթներ: Վարչագործարարական ոճ (դիմում, ստացական, արձանագրություն, տեղեկանք և այլն):</p> | | |
| <p>Օտար լեզու</p> | <p>8</p> | <p>240</p> |
| <p>Հնչյունների արտասանության, ինտոնացիայի, շեշտադրական համակարգի և ուսուցանվող լեզվում խոսքի ռիթմի յուրահատկությունը, տառադարձության ընթերցանությունը: Ընդհանուր և տերմինաբանական բնույթի 2000 ուսուցողական բառային միավորով բառապաշարի նվազագույն: Հասկացություն բառակազմական հիմնական միջոցների, բառապաշարների տարբերակման, ազատ և կայուն բառակապակցությունների, դարձվածաբանական միավորների մասին: Գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ առանց իմաստի աղճատման ընդհանուր բնույթի հաղորդակցումն ապահովող քերականական սովորույթները: Ուսումնասիրվող լեզվի երկրների մշակույթն ու սովորույթները: Բանավոր խոսքը: Պաշտոնական և ոչ պաշտոնական շփման ընդհանուր հաղորդակցական իրադրություններում առավել չափով օգտագործվող և հարաբերականորեն պարզ բառային-քերականական միջոցների օգտագործումը երկխոսության մեջ և անհատական խոսքում: Ունկդրում: Կենցաղային և մասնագիտական հաղորդակցման բնագավառներում երկխոսության և անհատական խոսքի ըմբռնում: Ընթերցանություն: Տեքստերի տեսակները. ոչ բարդ գործնական բնույթի և լայն մասնագիտական ուղղվածության տեքստեր: Գրավոր խոսքը: Խոսքային ստեղծագործությունների տեսակները, կենսագրություն, փոքր զեկույցներ, անձնական նամակ, գործնական նամակ, ռեֆերատ:</p> | | |
| <p>Հայ ժողովրդի պատմություն</p> | <p>4</p> | <p>120</p> |
| <p>Պատմական գիտության էությունը, մեթոդները: Հայրենական պատմությունը անցյալում և ներկայում: Հայոց պատմությունը որպես համաշխարհային պատմության անքակտելի մաս: Հին հայկական պետության կազմավորման և զարգացման փուլերը: Արարատյան թագավորության կազմավորումը և անկումը: Երվանդունիների համահայկական պետությունը: Աքեմենյան Պարսկաստանը և Երվանդունիները: Ալեքսանդր Մակեդոնացին և հելլենիզմը Հայաստանում: Արտաշեսյան արքայատոհմի հաստատումը և Արտաշես 1-ին քաղաքական գործիչը: Տիգրան Մեծ: Արտաշեսյան արքայատոհմի անկումը և Արշակունիների արքայատոհմի հաստատումը: Հին հայկական մշակույթը: Քրիստոնեության ընդունումը ու հայոց գրերի գյուտը որպես ազգի գոյապահպանության կովաններ: Հայ ժողովրդի պայքարը հանուն անկախության վերականգնման 5-9-րդ դերերում: Հայ</p> | | |

| | | |
|--|---|----|
| <p>ժողովրդի ազատագրական պայքարն ընդդեմ պարսկա-բյուզանդական բռնատիրության և ձուլման քաղաքականության 5-6-րդ դարերում: Արաբական արշավանքներն Չայաստան և ժողովրդական ապստամբությունները 8-9-րդ դարերում: Չայկական մշակույթը 5-8-րդ դարերում: Բագրատունիների թագավորության հիմնումն, ամրապնդումը, վերելքը և անկումը: Սելջուկ թուրքերի արշավանքը և Ջաքարյանների իշխանությունը: Կիլիկիայի հայկական պետությունը (11-14-րդ դդ): Ռուբինյան իշխանությունը և թագավորության հռչակումը Կիլիկիայում: Չայ-մոնղոլական դաշինքը: Չայ ազատագրական շառնները 16-18-րդ դդ: Չայաստանի 1-ին և 2-րդ բաժանումները Պարսկաստանի և Թուրքիայի միջև: Ազատագրական շարժումների սկիզբը և հետագա ծավալումը 17-18-րդ դդ: Իսրայել Օրի: Ազատագրական պատերազմներն Արցախում և Սյունիքում 1720-ական թթ: Չովսեփ Էմինը և հայ ազատագրական շարժումը: Չայաստանը 19-ր դարի առաջին կեսին: 1804-1813թթ. և 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմները և Արևելյան Չայաստանի նվաճումը Ռուսաստանի կողմից: 1806-1812թթ. և 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմները և Չայաստանը: Չայ ժողովրդի սոցիալ-տնտեսական ու քաղաքական դրությունը 19-րդ դարի երկրորդ կեսին: Չայ հասարակական-քաղաքական միտքը 1850-1860-ական թթ.: 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցի միջազգայնացումը: Չայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը, նրանց ծրագրերն ու գործելակերպը: Արևմտահայերի զանգվածային կոտորածները 1895-1896թթ.: Չայկական մշակույթը 19-րդ դարում: Չայ ժողովուրդը առաջին աշխարհամարտի տարիներին: Չայկական հարցը 1912-1914թթ.: Չայոց ցեղասպանության թուրքական ծրագիրն ու իրականացման փուլերը: Մեծ Եղեռն: 1917թ. փետրվարյան, հոկտեմբերյան հեղափոխությունը և Չայաստանը: Չայաստանի առաջին հանրապետությունը: Չայ ժողովրդի 1918թ. մայիսյան հերոսամարտերը և Չայաստանի առաջին հանրապետության հռչակումը: Չանրապետության սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքը: Արտաքին քաղաքականությունը: Սևրի պայմանագիրը: Թուրք-հայկական պատերազմը, Չանրապետության անկումը: Չայաստանի խորհրդային հանրապետությունը 1920-1940թթ.: Չայ ժողովուրդը երկրորդ աշխարհամարտի տարիներին: Չայրենական մեծ պատերազմը: Չայ ժողովրդի մասնակցությունը պատերազմին: Սփյուռքահայերի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին: Չայկական հարցը Պոտսդամի կոնֆերանսում: Չայաստանի խորհրդային հանրապետությունը 1945-1991թթ.: Երկրի տնտեսության վերականգնումը: Չայաստանը Խրուշչովյան բարենորոգումների, Բրեժնևյան հասարակական-քաղաքական կյանքի լճացման տարիներին: Գորբաչովյան վերակառուցման քաղաքականությունը, Արցախյան շարժումը և Սպիտակի երկրաշարժը: Չայաստանի հանրապետությունը 1991-2003թթ.: ԽՍՀՄ փլուզումը: Չայտանի երրորդ հանրապետության հռչակումը: Չողի սեփականաշնորհումը ու ձեռնարկությունների ապապետականացումը: Չանրապետության արտաքին քաղաքականությունը: Ցեղասպանության ճանաչման գործընթացը: Արցախյան հիմնահարցը: Չայրենիք-սփյուռք կապերը: Չայկական մշակույթը:</p> | | |
| Քաղաքագիտություն | 2 | 60 |
| Քաղաքագիտության օբյեկտը և առարկան, մեթոդները և գործառույթները: Քաղաքական ուսմունքների զարգացման հիմնական | | |

| | | |
|--|----------|-----------|
| <p>փուլերը: Հայ քաղաքական մտքի ավանդույթները, արմատները, հիմքերը: Արդի քաղաքական դպրոցները: Քաղաքականություն և քաղաքական իշխանություն: Քաղաքական համակարգ: Քաղաքական ռեժիմ: Դեմոկրատիայի ժամանակակից տեսություններն ու մոդելները: Պետության գործառույթները, ձևերը: Պետական իշխանության մարմինները Հայաստանում: Իրավական և սոցիալական պետություն: Կառավարման նախագահական, կիսանախագահական և խորհրդարանական ձևերի համեմատական վերլուծությունը: Քաղաքական իշխանության սոցիալական սուբյեկտները: Ընտրություններ և ընտրական համակարգեր: ՀՀ ընտրական համակարգը: Քաղաքական կուսակցություններ և կուսակցական համակարգեր: Քաղաքական գործընթացներ: Քաղաքական արդիականացում: Քաղաքական կոնֆլիկտներ և դրանց լուծման ուղիները: Քաղաքական տեխնոլոգիաներ: Համաշխարհային քաղաքական գործընթացներ և միջազգային հարաբերություններ: Արդի համաշխարհային հարաբերությունների աշխարհաքաղաքական վերլուծություն: Քաղաքական գլոբալիստիկա, դրա ընդհանուր բնութագիրը, համամարդկային հիմնահարցերի լուծման քաղաքական ուղիները: Քաղաքական կանխատեսում:</p> | | |
| <p>Մշակութագիտություն</p> | <p>2</p> | <p>60</p> |
| <p>Մշակութաբանություն և մշակույթի պատմություն: Մշակութաբանական տեսություններ: Մշակույթի կառուցվածք և գործառույթներ: Հոգևոր մշակույթը և նրա տարրերը: Մշակութային ժառանգորդում, նորարարություն, ավանդապահություն: Չանգվածային և էլիտար մշակույթ: Մշակույթ և քաղաքականություն: Նախնադարի մշակույթ և դիցաբանական աշխարհայացք: Արվեստի տեսակների առաջացումը: Հին աշխարհի մշակույթը: Անտիկ աշխարհի մշակույթը: Միջնադարյան մշակույթ և գեղարվեստական ոճեր: Վերածննդի մշակույթ: Հումանիզմ և արվեստ: Մշակույթը 17-20-րդ դարերում: Դարաշրջաններ և գեղարվեստական ուղղություններ:</p> | | |
| <p>Փիլիսոփայություն</p> | <p>3</p> | <p>90</p> |
| <p>Փիլիսոփայության ձևավորումը, հետազոտության ոլորտները, աշխարհայացքային հիմնախնդիրները: Փիլիսոփայական գիտելիքների կառուցվածքը: Փիլիսոփայության զարգացման հիմնական փուլերը: Անտիկ Հունաստանի, միջին դարերի, հայոց քրիստոնեության ջատագովական, նոր և նորագույն ժամանակաշրջանի փիլիսոփայական միտքը: Ուսմունք կեցության մասին: Տարածությունը, ժամանակը, շարժումը կեցության դրսևորման եղանակ: Շարժման, ժամանակի, տարածության վերաբերյալ դասական և հարաբերականության տեսությունները: Շարժում և զարգացում: Դետերմինիզմ և ինդետերմինիզմ: Օրենք և օրինաչափություն: Գիտակցություն: Նյութականը և իդեալականը: Գիտակցականը և անգիտակցականը: Լեզու և մտածողություն: Ճանաչողություն: Գիտելիք և հավատ: Ընթրնում և բացատրություն: Իմացության զգայական և ռացիոնալ աստիճանները: Ճշմարտության հիմնախնդիրը: Ճշմարտության չափանիշները: Գիտական ճանաչողության կառուցվածքը: Գիտական իմացության էմպիրիկ և տեսական մակարդակները: Գիտական հետազոտության մեթոդները: Մարդու կեցության իմաստը: Մարդը սոցիալական միջավայրի արդյունք, կենսաբանական, հոգեկան նախահիմքերի ամբողջություն: Ազատություն և պատասխանատվություն: Բարոյականություն, արդարություն, իրավունք: Բարոյական արժեք: Գեղագիտական և կրոնական արժեքներ: Խղճի ազատություն: Բնություն</p> | | |

| | | |
|---|----------|-----------|
| <p>և հասարակություն: Քաղաքացիական հասարակություն և պետություն: ազատություն և անհրաժեշտություն: Հասարակության զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները: Սոցիալական հեղափոխություն: Փիլիսոփայական հիմնական ուղղությունները և դպրոցները: 20-րդ դարի փիլիսոփայական հիմնական հոսանքները: Կենսաբանության և էկոլոգիայի փիլիսոփայական հիմնախնդիրները: Էկոլոգիան և քաղաքականությունը: Էկոլոգիական աղետ: Բնապահպանական շարժումներ:</p> | | |
| <p>Իրավագիտություն</p> | <p>2</p> | <p>60</p> |
| <p>Պետություն և իրավունք: Դրանց դերը հասարակական կյանքում: Պետության և իրավունքի ծագումը, էությունը, հատկանիշները, գործառույթները, կառուցվածքը, ձևերը: Իրավունքի նորմերը և աղբյուրները: Նորմատիվային իրավական ակտերի հասկացությունը, տեսակները: Օրինականության հասկացությունը: ՀՀ իրավունքի համակարգը: Իրավունքի ճյուղերը: Սահմանադրական իրավունք: Պետության և անհատի փոխհարաբերությունները, քաղաքացիների իրավական վիճակի սկզբունքները: Պետական մարմինների համակարգը և տեսակները: Քաղաքացիական իրավունք: Քաղաքացիական իրավահարաբերություն: Իրավաբանական անձինք: Գրոծարքներ և ներկայացչություն: Հայցային վաղեմություն: Պարտավորություններ: Պայմանագիր: Հեղինակային իրավունք: Ժառանգական նոր իրավունք: Բույսերի նոր սորտերի և կենդանիների նոր ցեղերի նկատմամբ իրավունքների պահպանություն: Աշխատանքային իրավունք: Վարչական իրավունք: Քրեական իրավունք: Հողային իրավունք: ՀՀ դատական համակարգը: ՀՀ ոստիկանության մարմինները: Արդարադատությունը և դրա խնդիրները: Քաղաքացիական դատավարության իրավունքը: Քրեական դատավարության իրավունքը: Ապացույցներ, իրեղեն ապացույցներ: Ձեռքակալում: Խափանման միջոցներ: Բերման ենթարկելը: Միջազգային պայմանագրեր: Միջազգային իրավունքի աղբյուրները:</p> | | |
| <p>Տնտեսագիտության տեսություն</p> | <p>3</p> | <p>90</p> |
| <p>Տնտեսագիտության տեսության առարկան և մեթոդը: Տնտեսական զարգացման ընդհանուր գծերն ու հիմնական հասկացությունները: Շուկայական տնտեսության ընդհանուր բնութագիրը: Պահանջարկ, առաջարկ, գին: Ձեռնարկություն և ձեռնարկատիրական գործունեություն: Արտադրության ծախսեր և շահույթ: Մրցակցություն և մենաշնորհ: Կապիտալի շուկա և տոկոս: Հողային ռեսուրսների շուկա և ռենտա: Աշխատանքի շուկա և աշխատավարձ: Եկամտի բաշխում: Ազգային տնտեսություն: Մակրոտնտեսական հավասարակշռություն և տնտեսական աճ: Շուկայական տնտեսության ցիկլային զարգացումը: Գործազրկություն, ինֆլյացիա: Դրամավարկային համակարգ: Բանկեր: Ֆինանսներ և ֆիսկալ քաղաքականություն: Միջազգային տնտեսական հարաբերություններ:</p> | | |
| <p><i>Բուհական քաղաղորհչ</i></p> | | |
| <p>Լատիներեն լեզու</p> | <p>2</p> | <p>60</p> |
| <p>Լատիներենի ուղղագրական, ուղղախոսական առանձնահատկությունները: Լատիներենի և հունական ծագում ունեցող մոտ 350 բառերի և բառակազմական միավորների յուրացում: Անասնաբուժական, անասնաբուժական, անատոմիական-հյուսվածաբանական, կլինիկական տերմինների թարգմանություն: Բառազարգացման եղանակներ: Դեղագրական բառապաշար, դեղատոմսային կրճատումներ, դեղատոմսերի կազմում:</p> | | |

| | | |
|---|---|-----|
| Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ | | |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ | | |
| Հանրապետական բաղադրիչ | | |
| Բարձրագույն մաթեմատիկա | 2 | 60 |
| Կոորդինատների մեթոդ: Ուղիղ գիծ: Որոշիչներ: Գծային հավասարումների համակարգեր: Գաուսի մեթոդը: Վեկտորներ: Հարթություն: Թվային հաջորդականություններ: Հաջորդականության սահման: Ֆունկցիա: Ֆունկցիայի սահման: I և II նշանավոր սահմաններ: Ֆունկցիայի անընդհատություն և խզումներ: Ֆունկցիայի ածանցյալ: Ֆունկցիայի դիֆերենցիալ: Դիֆերենցիալ հաշվի հիմնական թեորեմներ: Ֆունկցիայի էքստրեմումներ: Նախնական ֆունկցիա: Անորոշ ինտեգրալ: Որոշյալ ինտեգրալ: Որոշյալ ինտեգրալի կիրառությունները: Թվային շարքեր: Աստիճանային շարքեր: | | |
| Բուսաբանություն | 2 | 60 |
| Բուսաբանության խնդիրները և զարգացման փուլերը: Բուսական բջջի առանձնահատկությունները: Տուրգոր և պլազմոլիզ: Օսմոտիկ համակարգ: Բուսական հյուսվածքներ: Բուսական ռեսուրսների օգտագործումը բժշկության, անասնաբուժության և անասնաբուծության մեջ: Բույսերի ձևաբանություն: Բույսերի վեգետատիվ և գեներատիվ օրգանների բնորոշումը: Վեգետատիվ օրգանների (արմատ, ցողուն, տերև) ֆունկցիաները և կառուցվածքը, ձևաբանությունը և անատոմիան: Գեներատիվ օրգանների կառուցվածքը, ձևաբանությունը և դասակարգումը: Բույսերի աճը, զարգացումը և բազմացումը: Վեգետատիվ, անսեռ և սեռական բազմացում: Բույսերի կարգաբանությունը: Կարգաբանական միավորներ, ստորակարգ բույսերի ենթաթագավորությունը: Բարձրակարգ բույսերը և նրա բաժինները՝ մամռանմաններ, գետնամուշկայիներ, ձիաձեթանմաններ, պտերանմաններ, մերկասերմեր: Դրանց բազմացումը, զարգացումը, նշանակությունը տնտեսության մեջ: Ծածկասերմերի դասերի բնութագիրը և կարգաբանությունը: Միաշաքիլ և երկշաքիլ բույսերի համեմատական մորֆոլոգիան: Միաշաքիլ և երկշաքիլ բույսերի բնութագրումը և առավել տարածված մշակովի, կերային, թունավոր և դեղատու տեսակների բնութագրումը: | | |
| Անօրգանական և անալիտիկ քիմիա | 4 | 120 |
| Նյութի կառուցվածքը: Քիմիական ռեակցիաների էներգետիկական, քիմիական թերմոդինամիկայի հասկացությունները և թերմոքիմիայի օրինաչափությունները: Քիմիական հավասարակշռություն, զանգվածների ներգործության սկզբունքը, հավասարակշռության հաշվարկը, Լե-Շատելյեի սկզբունքը: Ֆազային հավասարակշռություններ, նյութերի ագրեգատային վիճակներ: Լուծույթների տեսությունը: Էլեկտրոլիտների և ոչ էլեկտրոլիտների լուծույթների հատկությունները: Իոնական հավասարակշռություններ: Էլեկտրաքիմիա, էլեկտրոլիզ և գալվանական էլեմենտներ: Քիմիական կինետիկա և կատալիզ: Բիոգեն s, p և d էլեմենտների հատկությունները, ստացման եղանակները և կիրառումը բժշկական պրակտիկայում: Որակական անալիզ: Կատիոնների անալիզ, կատիոնների դասակարգումը, մասնակի ռեակցիաները: Կոտորակային և սիստեմատիկ անալիզ: Անիոնների անալիզ: Անիոնների հայտնաբերման ռեակցիաները: Չոր աղի անալիզ: Քանակական անալիզ, նրա էությունը: Կշռային և ծավալային անալիզ: Թթվա-հիմնային տիտրում, աշխատանքային լուծույթներ: Թթվաչափություն և հիմնաչափություն, կիրառումը բժշկական պրակտիկայում: Վերօքս | | |

| | | |
|---|----------|------------|
| <p>տիտրման եղանակներ՝ պերմանգանատոմետրիա, յոդաչափության կիրառության ոլորտները: Կոմպլեքսոմետրիկ տիտրում, դրա կիրառումը: Հասկացողություն անալիզի ֆիզիկաքիմիական եղանակների վերաբերյալ:</p> | | |
| <p>Կենդանաբանություն</p> | <p>4</p> | <p>120</p> |
| <p>Կենդանիների ապրելավայրը: Կենդանիների համակեցության ձևերը: Նախակենդանիների տիպ: Տիպի բնութագրումը: Նախակենդանիների կազմությունը, շարժումը, սննդառությունը, բազմացումը, կարգաբանությունը: Սարկոդյանների, մտրակավորների, սպորավորների դասերի բնութագրումը և կարգաբանությունը: Կոկցիդիանների, արյան սպորավորների զարգացման ցիկլերի առաջացված հիվանդությունները և նրանց դեմ պայքարի միջոցառումները: Սիմբիոտիկ ինֆուզորիաներ: Սպունգների տիպ, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները: Աղեխորշավորների տիպ: Կազմության առանձնահատկությունները, սննդառությունը և բազմացումը: Տափակ, կլոր, օղակավոր որդերի տիպերի բնութագրումը, կառուցվածքային առանձնահատկությունները, մակաբույծ տեսակների կառուցվածքային առանձնահատկությունները, բազմացումը և զարգացման ցիկլերը: Օղակավոր որդերի տիպի կարգաբանությունը, նրանց նշանակությունը ձկների սննդառության, հողագոյացման, բժշկության մեջ: Հողվածոտանիների տիպի բնութագրումը, կառուցվածքային առանձնահատկությունները, բազմացումը, զարգացումը և կարգաբանությունը: Փափկամարմինների տիպի բնութագրումը, կառուցվածքային առանձնահատկությունները: Փորոտանի, երկփեղկանի և գլխոտանի փափկամարմինների դասերի առանձնահատկությունները և նրանց նշանակությունը: Փորոտանի փափկամարմինները որպես հիվանդությունների միջնորդ տերեր: Երկրորդաբերանավորներ: Հասկացություն մարմնի երկրորդական խոռոչի, երկկողմանի համաչափության, երկրորդական բերանի մասին: Փշամորթերի տիպ: Քորդավորների տիպ: Տիպի բնութագրումը և կարգաբանությունը: Թրթուրաքորավորների ենթատիպի համառոտ բնութագրումը: Անգանգների ենթատիպ: Ողնաշարավորների ենթատիպի կառուցվածքային առանձնահատկությունները: Անձնոտների, ձկների, երկկենցաղների, սողունների, թռչունների և կաթնասունների դասերի բնութագրումը, կազմության և կենսագործունեության առանձնահատկությունները: Ողնաշարավորների դասերի մանրամասն նկարագրությունը: Ձկների, սողունների, թռչունների բազմազանությունը և նշանակությունը: Կաթնասունների կարգաբանությունը և նշանակությունը: Կաթնասունների բուծվող տեսակները: Ողնաշարավորների ֆիլեգենեզը:</p> | | |
| <p>Ագրոէկոլոգիա և շրջակա միջավայրի պաշտպանություն</p> | <p>2</p> | <p>60</p> |
| <p>Կենսոլորտը և մարդը: Էկոհամակարգեր, օրգանիզմների ու միջավայրի փոխհարաբերությունները: Ագրոէկոհամակարգերը և դրանց գործելակերպը տեխնոգենագիայի պայմաններում: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման և բնության պահպանության էկոլոգիական սկզբունքները: Միջազգային համագործակցությունը և շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները: Մթնոլորտի օդի, ջրի, հողերի, բուսական ու կենդանական աշխարհի պահպանությունը և դրանց արդյունավետ օգտագործումը: Շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրները անասնապահական ֆերմաներում ու համալիրներում: Կենսատեխնոլոգիայի օգտագործումը անասնապահության թափոնների վերամշակման համար: Էկոլոգիական տեսակետից անվտանգ գյուղատնտեսական մթերքների արտադրության տեխնոլո-</p> | | |

| | | |
|---|---|-----|
| գիաները: Էկոլոգիական քաղաքականությունը և գյուղատնտեսության էկոլոգիացման հիմնախնդիրները: | | |
| Ինֆորմատիկա և ինֆորմացիոն տեխնոլոգիայի հիմունքներ | 3 | 90 |
| Ինֆորմատիկայի հիմունքները, համակարգիչների կառուցվածքային սխեման, նրա առանձին սարքերի դերն ու նշանակությունը: Համակարգչի թվաբանական և տրամաբանական հիմունքները: Ինֆորմացիայի չափման սկզբունքները և միավորները, նրա ներածման, արտածման և պահպանման սկզբունքները: Համակարգչի հիշողության տարողությունն ու արագագործությունը, նրա համակարգային, ծրագրային ապահովումը, նշանակությունն ու ֆունկցիաները: Սարքավորումների սպասարկման ծրագրեր (դրայվերները), օժանդակ սպասարկման ծրագրեր (ուտիլիտներ և ծրագրեր-թաղանթներ): Windows օպերացիոն համակարգի ընդհանուր նկարագիրը և կիրառական եղանակները: Ալգորիթմները, նրանց ներկայացման եղանակները, մշակման փուլերը: Ծրագրավորման լեզուների տարրերը, կառուցվածքները, դասակարգումը, ծրագրերի մշակման և կատարման փուլերը: Կիրառական ծրագրերի փաթեթները: Համակարգչային համակարգեր և ցանցեր: | | |
| Ֆիզիկա և կենսաֆիզիկայի հիմունքներ | 4 | 120 |
| Նյութական կետի և պինդ մարմնի համընթաց, պտտական, տատանողական շարժումների կինեմատիկա և դինամիկա: Ուժեր: Առածական մարմինների հատկությունները: Էներգիա: Աշխատանք, հզորություն: Հիդրոդինամիկայի ֆիզիկական հիմունքները: Սուլեկուլյար ֆիզիկայի, թերմոդինամիկայի հիմունքները: Նյութերի կառուցվածքը: Էլեկտրաստատիկա: Հաստատուն հոսանքի օրենքները: Էլեկտրամագնիսականություն: Փոփոխական հոսանք: Լույսի բնույթը: Երկրաչափական և ալիքային օպտիկա: Քվանտա-օպտիկական երևույթներ: Ատոմի և միջուկի կառուցվածքները: Ռադիոակտիվություն: Ռենտգենյան ճառագայթում: Տարրական մասնիկներ: Հիդրոդինամիկայի օրենքների կիրառումը հենոդինամիկայում: Սիրտ-անոթային համակարգի ֆիզիկական մոդելը և էլեկտրական համանմանությունները: Արյան ճնշման և արագության չափման ֆիզիկական հիմունքները: Ակուստիկայի ֆիզիկական հիմունքները: Ինֆրաձայնի և ուլտրաձայնի ազդեցությունները կենդանի օրգանիզմների վրա: Ուլտրաձայնի ստացումը և դրա կիրառման մեթոդները անասնաբուժական կլինիկաներում, վիրաբուժությունում և դիագնոստիկայում: Կենսականական համակարգի թերմոդինամիկայի հիմունքները: Անասնաբուժական ֆոտոթերապիայում կիրառվող թերմոդինամիկական մեթոդների մասին: Էլեկտրական երևույթները կենսաբանական համակարգերում: Բջջային մենբրանի ֆիզիկական հատկությունները: Կենսապոտենցիալներ: Հասկացություն էլեկտրակարգիչի մասին: Փոփոխական հոսանքի ազդեցությունը կենդանիների օրգանիզմի վրա: Էլեկտրամագնիսական դաշտի և ռենտգենյան ճառագայթման կենսաբանական ազդեցությունները: | | |
| Օրգանական քիմիա | 2 | 60 |
| Սահմանային և ոչ սահմանային ածխաջրածիններ: Օքսիմիացություններ: Սահմանային միատոմ, երկատոմ, եռատոմ սպիրտներ, դրանց ֆիզիկական և քիմիական հատկությունները: Ալդեհիդների և կետոնների հոմոլոգիական շարքը, դրանց ստացման եղանակները, ֆիզիկական, քիմիական հատկությունները՝ միացման, կոնդեսացման ռեակցիաները: Կարբոնատային թթուներ: Միաիմն, երկիմն հազեցած | | |

| | | |
|--|---|-----|
| կարբոնաթթուների հոմոլոգիական շարքը, իզոմերները, անվանակարգը, ստացման եղանակները, ֆիզիկական և քիմիական հատկությունները: | | |
| Կենսաքիմիա | 6 | 180 |
| <p>Կենսաքիմիայի խնդիրները: Կյանքը որպես մոլեկուլային պրոցես: Ինֆորմացիոն մոլեկուլները: Ժառանգական ինֆորմացիայի կոդավորումը, պահպանումը և պահպանումը կենսաբանական համակարգերում: Սպիտակուցի սինթեզը: Ամինաթթուները, պեպտիդները, սպիտակուցները: Հատկությունները բաժանման, հայտնաբերման և նմանեցման եղանակները: Պեպտիդների առաջնային կառուցվածքի պարզաբանում: Սպիտակուցի կազմավորման մակարդակները, պայմանավորող կապերը և գոյածությունները: Սպիտակուցի կառուցվածքը և ֆունկցիան: Ֆերմենտներ: Ֆերմենտային կատալիզ: Սուբստրատի խտության ազդեցությունը: Միքսելիս-Մենթենի տեսությունը: Կոֆակտոր և կոֆերմենտ հասկացությունը: Ֆերմենտների սուբստրատային սպեցիֆիկությունը, գործունեության կարգավորումը: Ֆերմենտների կիրառումը: Վիտամինները և միկրոտարրերը: Վիտամինները որպես սննդի անփոխարինելի օրգանական միկրոբաղադրամասեր: Վիտամինների դասակարգումը ըստ լուծելիությանը և ֆունկցիայի՝ կոֆերմենտային, հորմոնալ և հակաօքսիդանտային: Մակրո և միկրոտարրերի դերը նյութափոխանակության պրոցեսներում: Կենսաէներգետիկա: Թերմոդինամիկայի օրենքները և կենդանի համակարգերը: Քիմիական էներգիայի սինթեզը: Շնչառություն: Օքսիդացիոն ֆոսֆորիլացում: Ֆոսֆորիլացման մեխանիզմները: Ածխաջրատները, դրանց ֆունկցիաները, քայքայումը և սինթեզը: Գլյուկոզի աերոբ և անաերոբ քայքայումը, նրա քայքայման լրացուցիչ ուղիները, դրանց նշանակությունը բջջի կենսագործունեությանը: Այլ մոնոսախարիդների մուտքը գլիկոլիտիկ շղթա: Գլյուկոզի և գլիկոզենի սինթեզը: Ածխաջրեր նյութափոխանակության կարգավորումը: Լիպիդները և նրանց նյութափոխանակությունը: Լիպիդների դերը կենսաբանական թաղանթների կազմավորմանը և ֆունկցիաներում: Գարպաթթուների նյութափոխանակությունը՝ նրանց կատաբոլիզմը և սինթեզը: Բևեռացված լիպիդների նյութափոխանակությունը: Ֆոսֆատիդների, գլիկոլիպիդների և ստերինների կենսասինթեզը: Ազոտային նյութափոխանակությունը: Ամոնիակի առաջացման և չեզոքացման ուղիները: Տրանս- և դեզամինացման ռեակցիաները: Առանձին ամինաթթուների քայքայումը և սինթեզը: Սիզանյութի սինթեզը: Ամինաթթվային նյութափոխանակության ժառանգական խանգարումները: Պուրինային և պիրիմիդինային հիմքերի սինթեզը և քայքայումը: Նյութափոխանակային գործընթացների ինտեգրացումը, դրա կարգավորման նյարդահումորալ մեխանիզմները:</p> | | |
| Կենսագործունեության անվտանգություն | 2 | 60 |
| <p>«Մարդ-մեքենա-արտադրական միջավայր» համակարգը: Վտանգավոր ու վնասակար արտադրական գործոնները, դժբախտ դեպքերի առաջացման պատճառները: Կենսագործունեության անվտանգության իրավական հիմքերը: Աշխատանքի և հանգստի ռեժիմները: Անվտանգության հսկումը և վերահսկումը, հրահանգավորումները, բուժականխարգելիչ միջոցառումները, անհատական պաշտպանական միջոցները, սանիտարա-հիգիենիկ միջոցառումները: Անասնաբուժական-սանիտարական անցակետերը և ախտահանիչ պատնեշները ֆերմերային տնտեսություններում: Գյուղատնտեսական</p> | | |

| | | |
|---|---|----|
| <p>կենդանիների խնամքը և պրոֆիլակտիկան անվտանգության տեսանկյունից: Ֆերմաներում գյուղատնտեսական տեխնիկայի շահագործման անվտանգությունը, անասնաշենքերի միկրոկլիմայի պարամետրերը, օդափոխությունը, ջեռուցումը, լուսավորությունը: Արտադրական աղմուկ և վիբրացիա: Ճառագայթումներ: Վնասակար ու թունավոր նյութերի պահման և օգտագործման անվտանգությունը: Ազդանշանային համակարգեր: Արտակարգ իրավիճակներում գյուղատնտեսական կենդանիների էվակուցիան և խնամքը, էլեկտրաանվտանգությունը: Ստատիկական էլեկտրականությունն անասնագոմերում: Պաշտպանական անջատում, հողանցում, ամպրոպապաշտպանություն: Հրդեհային անվտանգությունը ֆերմաներում: Կրակմարիչ նյութեր, հրշեջ պաշտպանություն, հրշեջ ջոկատներ:</p> | | |
| <p>Քաղաքացիական պաշտպանություն և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում</p> | 2 | 60 |
| <p>Քաղաքացիական պաշտպանության սկզբունքները: Քաղաքացիների իրավունքներ ու պարտականություններ: Արտակարգ իրավիճակներ, աղետի գոտի, տարհանում և պատսպարում, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ, վտանգի ազդեցության վերացում: Տարածքի սանիտարական մշակում: Անհատական պաշտպանություն, փրկարարական ուժեր: Վտանգավոր օբյեկտների անվթար գործունեության ու կայունության ապահովում: Տարածքների, օբյեկտների, մարդկանց և կենդանիների ճառագայթային-քիմիական-մանրէաբանական վարակվածության դիտարկման և հսկողության կազմակերպում: Միջուկային-քիմիական-կենսաբանական զենք: Աղետի գոտում կարանտինային և այլ սանիտարա-հակահամաճարակային միջոցառումների իրականացում: Գյուղատնտեսական մշակաբույսերի և կենդանիների սպանդի կազմակերպում: Մարդկանց կյանքի և առողջության ապահովման գերակայություն, ապաստարան, հակառադիոակտիվ թաքստոց, գազապատարան, մարդկանց անհատական պաշտպանության միջոցներով ապահովման իրականացում: Բնակչության ազդարարում, պատսպարում, քողարկում, վտանգավոր տարածքների բացահայտում, բժշկական ապահովում, սննդամթերքի պաշարների ստեղծում: Դեզակտիվացիա, դերատիզացիա, դեզինֆեկցիա: Հատուկ-կարևորագույն նշանակության օբյեկտ, քաղաքացիական պաշտպանության կազմավորումներ, քաղաքացիական պաշտպանության նախապատրաստական միջոցառումներ:</p> | | |
| <p>Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ</p> | | |
| <p>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ</p> | | |
| <p><i>Բուհական բաղադրիչ</i></p> | | |
| <p>Գյուղատնտեսական կենդանիների բուծում</p> | 3 | 90 |
| <p>Գյուղատնտեսական կենդանիների ծագումը և ընտանեացման էվոլյուցիան: Հասկացություն ցեղի մասին: Ցեղստեղծման գործոնները: Ցեղերի կառուցվածքը, հատկանիշները, դասակարգումը և կատարելագործումը: Կենդանիների անհատական զարգացում (օնտոգենեզ). կապը ֆիլոգենեզի հետ: Օնտոգենեզի փուլերը և դրսևորման հիմնական օրինաչափությունները (անհամաչափություն, պարբերականություն և ռիթմիկություն): Աճի ու զարգացման վրա ազդող գործոնները: Թերզարգացման էությունը և համակշռման հնարավորությունները: Ուսմունք համակազմվածքի մասին: Նրա և օրգանիզմի կենսագործունեության դրսևորումների կապը:</p> | | |

| | | |
|---|-----------|------------|
| <p>Համակազմվածքի տիպերի դասակարգումը: Դրանց վրա ազդող գործոնները: Արտակազմվածքի և ներքնակազմվածքի գնահատման մեթոդները, դրանց գիտագործնական նշանակությունը: Գյուղատնտեսական կենդանիների կենսաբանական և տնտեսական հատկանիշները: Կենդանիների գնահատումը և բոնիտավորումը: Ընտրության տեսական հիմունքները, ձևերը և մեթոդները, դրա արդյունավետության վրա ազդող գործոնները: Զույգընտրություն, սկզբունքները, մեթոդները և փոխկապակցվածությունը ընտրության հետ: Ընտրության և զույգընտրության կազմակերպումը: Բուծման մեթոդները: Մաքրացեղ բուծում և տրամախաչում, դրանց նպատակը և խնդիրները: Ցեղի կառուցվածքի բարելավման և կատարելագործման ուղիները: Տրամախաչման եղանակները և դրանց նշանակությունը: Տոհմային աշխատանքների հիմունքները:</p> | | |
| <p>Գյուղատնտեսական կենդանիների անատոմիա</p> | <p>12</p> | <p>360</p> |
| <p>Շարժողական համակարգի ապարատների (ոսկրային, հոդային, մկանային) ընդհանուր մորֆո-ֆունկցիոնալ բնութագիրը: Կմախքի ընդհանուր բնութագիրը: Կմախքի ստորաբաժանումները: Իրանի, գլխի, վերջավորությունների կմախքի անատոմիական կառուցվածքը: Ոսկրների անընդհատ և ընդհատվող միացումներ: Կմախքի ոսկրների միացումները ըստ հոդերի: Մկանների դասակարգումը ըստ ծագման, գործունեության և տեղադրվածության: Իրանի, գլխի, վերջավորությունների մկաններ: Մաշկի և նրա ածանցյալների (մազեր, փափկաններ, ճանկեր, սմբակներ, մաշկային գեղձեր) անատոմիական կառուցվածքը: Մարսողական, շնչառական, միզային, արական և իգական սեռական ապարատների օրգանների անատոմիական կառուցվածքը: Արյան և ավշային շրջանառության ապարատների օրգանների անատոմիական կազմը: Ներքին սեկրեցիայի գեղձերի (վահանագեղձ, հարվահանաձև գեղձեր, ուրցագեղձ, մակերիկամներ, հիպոֆիզ, էպիֆիզ) կառուցվածքը: Կենտրոնական և ծայրամասային նյարդային բաժիններ: Ողնուղեղ, գլխուղեղ, ծայրամասային նյարդեր: Վեգետատիվ նյարդային բաժին: Տեսողական, լսողական և հավասարակշռության օրգաններ: Ընտանի թռչունների մարմնակազմության առանձնահատկությունները:</p> | | |
| <p>Մասնավոր անասնաբուծություն</p> | <p>5</p> | <p>140</p> |
| <p>Տավարի ծագումը, նշանակությունը, արտակազմվածքի, ներքնակազմվածքի, համակազմվածքի առանձնահատկությունները և գնահատումը, տարիքի որոշելը: Կովերի կաթնային մթերատվությունը, դրա վրա ազդող գործոնները և հաշվառումը: Տավարի մսային մթերատվությունը և դրա վրա ազդող գործոնները, մսային մթերատվության քանակական և որակական գնահատումը: Կաթի և մսի արտադրության տեխնոլոգիան, մատղաշի աճեցումը մսի համար: Տավարի վերարտադրությունը, նորոգման մատղաշի աճեցումը: Ձիերի արտակազմվածքային առանձնահատկությունները, տարիքի որոշելը, երանգները և նշանները, չափումները, ինդեքսները: Ձիերի բանող հատկությունները, մթերատվությունը աշխատանքի տարբեր կատեգորիաներում, ձիերի գլխաքանակի և արտադրողականության հաշվարկը: Ձիերի վերարտադրությունը և մատղաշի աճեցումը: Տավարի և ձիերի ցեղերի ուսումնասիրումը: Ոչխարաբուծության նշանակությունը, զարգացման հեռանկարները, ոչխարների կենսաբանական առանձնահատկությունները, բրդաթելերի տիպերը և հյուսվածաբանական կառուցվածքը: Ոչխարների բրդային մթերատվությունը, խուզի կազմակերպումը, գեղմի կառուցվածքը, բրդի</p> | | |

| | | |
|---|---|-----|
| <p>դասակարգումը, բրդաթելերի ֆիզիկա-տեխնիկական հատկությունները: Ոչխարների մսային, կաթնային և մորթեղենային մթերատվությունը, ոչխարների համարակալումը, տարիքի որոշումը ատամների միջոցով, ոչխարների բոնիտավորումը: Ոչխարների հոտի վերարտադրությունը, գառների աճեցումը և ցեղերի ուսումնասիրումը: Խոզաբուծության նշանակությունը, զարգացման հեռանկարները, խոզերի կենսաբանական առանձնահատկությունները, արտակազմվածքը և նրա գնահատումը: Խոզերի մթերատվությունը և դրանց հաշվառման ձևերը, համարակալումը: Խոզերի հոտի վերարտադրությունը, հոտի կառուցվածքը և շարժը, խոճկորների աճեցումը: Խոզերի մսաճարպային մթերատվությունը, բուսումը և մթերման ստանդարտները, խոզերի բոնիտավորումը: Թռչնամսի և ձվի արտադրության տեխնոլոգիան: Գազարամսի և հումքի արտադրության տեխնոլոգիան:</p> | | |
| <p>Հյուսվածաբանություն, բջջաբանություն, սաղմնաբանություն</p> | 6 | 180 |
| <p>Բջիջը և նրա կառուցվածքային տարրերը: Բջջաթաղանթ, ցիտոպլազմա, կորիզ: Թաղանթապատ և ոչ թաղանթապատ օրգանոիդներ, ներառումներ: Բջիջների միացման ձևերը: Բջիջների բաժանումը՝ միթոզ, ամիթոզ, մեյոզ: Ոչ բջջային կառուցվածքներ: Բջիջների վերարտադրում, բջջային ցիկլ, ծերացում, մահ: Սպերմատոզոիդ, սպերմատոզենեզ: Զվարթիջ, դասակարգումը օվոգենեզ: Սաղմի զարգացման օրինաչափությունները բեղմնավորում, տրոհում, գաստրուլացում, սաղմնային հյուսվածքների առանցքային օրգանների տարբերակում, արտասաղմնային օրգանների առաջացում: Էպիթելային, շարակցական, մկանային, նյարդային հյուսվածքների ընդհանուր բնութագիրը, զարգացումը, դասակարգումը, կառուցվածքը: Մեծ ուղեղի կեղևի, ուղեղիկի, ողնուղեղի, միջողնային և վեգետատիվ նյարդային հանգույցների, աչքի խնձորիկի հյուսվածաբանական կառուցվածքը: Ներզատիչ համակարգի կենտրոնական և ծայրամասային օրգանների հյուսվածաբանական կառուցվածքը: Արյունատար, ավշային անոթների, սրտի պատի հյուսվածաբանական կառուցվածքը: Մաշկը և նրա ածանցյալները: Մարսողական, շնչառական, միզասեռական, օրգանների հյուսվածաբանական կառուցվածքը, որպես խողովակակազմ օրգաններ: Սեռական ցիկլը և դրա հումորալ կարգավորումը:</p> | | |
| <p>Անասնաբուժական մանեթակենսաբանություն և իմունաբանություն</p> | 7 | 210 |
| <p>Անասնաբուժական մանեթակենսաբանության խնդիրները, միկրոօրգանիզմների դասակարգումը և անվանակարգումը, միկրոօրգանիզմների ձևը, կառուցվածքը, ֆիզիոլոգիան, գենետիկան՝ ժառանգականությունը և փոփոխականությունը, արտաքին միջավայրի գործոնների ազդեցությունը միկրոօրգանիզմների կենսագործունեության վրա, միկրոօրգանիզմների տարածվածությունը բնության մեջ և դերը նյութերի շրջանառությունում: Ուսմունք ինֆեկցիայի մասին, իմունաբանություն: Բակտերիալ ինֆեկցիաների (վարակների) հարուցիչները՝ գրամ դրական գնդաձև բակտերիաներ, սպոր չառաջացնող գրամ դրական ցուպիկաձև բակտերիաներ, սպոր առաջացնող գրամ դրական ցուպիկաձև բակտերիաներ, ախտածին անաէրոբներ, գրամ բացասական սպոր չառաջացնող ցուպիկաձև բակտերիաներ, ախտածին պսևդոմոնանդներ և միկոպլազմներ, պտուտակաձև բակտերիաներ, ախտածին ռիկետսիաներ և խլամիդիաներ, միկրոսկոպիկ սնկեր և նրանց կողմից առաջացվող հիվանդություններ:</p> | | |
| <p>Գյուղատնտեսական կենդանիների ֆիզիոլոգիա</p> | 8 | 240 |
| <p>Դրդունակ հյուսվածքների ֆիզիոլոգիա: Մկանների, նյարդերի և սինապսների ֆիզիոլոգիա: Նյարդային համակարգի ֆիզիոլոգիա:</p> | | |

| | | |
|---|----------|------------|
| <p>Ներգատիչ գեղծեր (հիպոթալամոս, հիպոֆիզ, վահանագեղձ, հարվահանագեղձ, ենթաստամոքսային գեղձ, մակերիկամներ, սեռական գեղձեր) և հորմոններ: Արյան համակարգի ֆիզիոլոգիա: Արյան և ավշի շրջանառություն: Սարսողության և շնչառության ֆիզիոլոգիա: Էներգիա և նյութափոխանակություն: Արտազատիչ օրգանների ֆիզիոլոգիա: Կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիա: Պայմանական և ոչ պայմանական ռեֆլեքսների առաջացումը: Զգայական օրգանների (տեսողության, լսողության, հոտառության, համի, շոշափելիքի, մկանային զգացողության) ֆիզիոլոգիա: Բարձրագույն նյարդային գործունեություն: Բարձրագույն նյարդային համակարգի տիպերը:</p> | | |
| <p>Անասնաբուժական գենետիկա</p> | <p>3</p> | <p>90</p> |
| <p>Գենետիկա առարկան, բնորոշումը, նպատակը և խնդրիները, զարգացման համառոտ պատմությունը: Ժառանգականության բջջաբանական և մոլեկուլային հիմունքները: Բջջի որպես գենետիկական համակարգ և նրա կառուցվածքային տարրերի դերը բջջի կենսական ցիկլում, կարիոտիպը որպես տեսական առանձնահատկություն: Փոփոխականության տեսակները և նրա ուսումնասիրության մեթոդները: Կենսաչափություն և վարիացիոն շարքի հիմնական պարամետրերը: Հատկանիշների ժառանգման օրինաչափությունները սեռական և անսեռ բազմացման ժամանակ: Մենդելի 1-ին, 2-րդ և 3-րդ օրենքները, ալելային և ոչ ալելային փոխազդեցության ձևերը: Ժառանգականության քրոմոսոմային տեսությունը: Միկրոօրգանիզմների և վիրուսների գենետիկան: Տրոնսֆորմացիա, տրանսդուկցիա, կոնյուգացիա, տրանսդուկցիա և սեքսուոկցիա: Մուտացիոն փոփոխականություն, գենետիկական սինդրոմներ: Իմունագենետիկական և գենետիկական բազմաձևություն: Արյան խմբերը, մոնոպոլիմորֆիկ շիճուկների ստացումը և կիրառումը: Իմունաբանական անհամատեղելիություն: Իմունիտետի գենետիկական հիմունքները, իմուն պատասխանի գենետիկական վերահսկողությունը, հիստոհամատեղելիության համակարգը և նրա կապը որոշ հիվանդությունների հետ: Կենդանիների գենետիկական անոմալիաները և միջավայրային հիվանդությունների նկատմամբ ունեցած գենետիկական դիմադրողականությունը: Գենետիկական անոմալիաների և հիվանդությունների նկատմամբ ունեցած կենդանիների ժառանգական դիմադրողականությունը բարձրացնելու մեթոդները:</p> | | |
| <p>Գյուղատնտեսական կենդանիների կերակրում</p> | <p>4</p> | <p>120</p> |
| <p>Կերերի քիմիական կազմը և սննդարարությունը, սննդարար նյութերի մարսելիությունը, ազոտի և ածխածնի հաշվեկշիռը, նյութափոխանակություն և էներգափոխանակություն: Կերերի պրոտեինային, ճարպային, ածխաջրային, վիտամինային, հանքային սննդարարությունը և կերերի ու կերաբաժինների ընդհանուր սննդարարության գնահատման մեթոդները: Կերերի դասակարգման մոտեցումները, արտադրության, պատրաստման, պաշարման, պահպանման և օգտագործման տեխնոլոգիական պահանջները: Կերատեսակների բնութագրումը ըստ սննդարարության, լիարժեքության, ուտելիության և կերային ու կերակրման առանձնահատկությունների: Կերերի նախնական վերամշակման, սննդարարության և ուտելիության բարձրացման լուծումները: Տավարի, ոչխարի, խոզերի, թռչունների, ձիերի և գյուղատնտեսական մյուս կենդանիների տարբեր սեռահասակային խմբերի լիարժեք կերակրման տեխնոլոգիական լուծումները, կերաբաժինների կազմման,</p> | | |

| | | |
|---|---|-----|
| կերախառնուրդների և համակցված կերերի պատրաստման պահանջները: Կերի բազայի, կերապահովվածության, կերօգտագործման և հատուցման մեկնաբանությունները: | | |
| Անասնաբուժական վիրուսաբանություն | 5 | 150 |
| Վիրուսների ձևը, կառուցվածքը, քիմիական կազմը, դասակարգումը, վերարտադրումը: Ֆիզիկական և քիմիական գործոնների ազդեցությունը վիրուսների վրա: Վիրուսների էկոլոգիան, գենետիկան՝ ժառանգականությունը և փոփոխականությունը, վիրուսային հիվանդությունների ախտածնությունը բջջի և օրգանիզմի մակարդակով, հակավիրուսային իմունիտետի առանձնահատկությունները: Վիրուսային հիվանդությունների ախտորոշումը, քիմիոթերապիան, յուրահատուկ պրոֆիլակտիկան և բուժումը: Վիրուսային հիվանդությունների ախտորոշման սկզբունքները: Վիրուսաբանությունում կիրառվող շճաբանական ռեակցիաները: Վիրուսների տիտրումը: Վիրուսների հետ աշխատելու կարգը և անվտանգության կանոնները, ախտաբանական նյութի ընտրությունը և պատրաստումը: Կենսաբանական զգայուն համակարգերի օգտագործումը վիրուսաբանությունում: Մանրադիտակային հետազոտման եղանակները: Մի քանի տեսակի ընդհանուր վիրուսային հիվանդությունների հարուցիչները: Խոշոր և մանր եղջերավոր անասունների, խոզերի, ձիերի, մսակերների, ճագարների, թռչունների վիրուսային հիվանդությունների հարուցիչները: Դաբաղի, կատաղության, խոշոր եղջերավոր անասունների պարագրիպ 3-ի, թռչունների գրիպի, նյուկասլ հիվանդության, ծաղկի լաբորատոր ախտորոշումը: | | |
| Ախտաբանական ֆիզիոլոգիա | 7 | 210 |
| Ընդհանուր ուսմունք հիվանդության մասին, հիվանդության առաջացման պատճառները, զարգացման մեխանիզմը, ընթացքը, ելքը: Արտաքին միջավայրի գործոնների ախտաբեր ազդեցությունը՝ ֆիզիկական, քիմիական, կենսաբանական, մեխանիկական: Հասակի, ժառանգականության, կառուցվածքի դերը ախտաբանությունում: Ռեակտիվականության դերը և նշանակությունը ախտաբանությունում: Ալերգիա, ալերգիկ հիվանդություններ: Ռեզիստենտականություն, իմունիտետ՝ տեսակները, նշանակությունը: Ծայրամասային արյան շրջանառության խանգարումներ՝ հիպերեմիա, իշեմիա, տրոմբ, էմբոլիա, ինֆարկտ: Բորբոքում, տեսակները, դասակարգումը: Ջերմակարգավորում՝ հիպոթերմիա, հիպերթերմիա, տենդ: Հյուսվածքներում առաջացած ախտաբանական գործընթացներ՝ հիպերտրոֆիա, հիպերպլազիա, դիստրոֆիա, ատրոֆիա, ռեգեներացիա: Ռեուլցբային աճ: Նյութափոխանակության խանգարումներ՝ սպիտակուցային, ճարպային, ածխաջրատային, ջրա-աղային, հանքային: Քաղցի ախտաբանական ֆիզիոլոգիա՝ լրիվ, թերի և որակական քաղց: Արյան համակարգի, արյան շրջանառության, շնչառական, մարսողական, արտաթորման, ներզատիչ, նյարդային համակարգի և լյարդի ախտաբանական ֆիզիոլոգիա: | | |
| Կենսատեխնոլոգիա | 3 | 90 |
| Կենսատեխնոլոգիայի առարկան. բնորոշումը, նպատակը, խնդիրները: Կենսատեխնոլոգիայի զարգացման համառոտ պատմությունը: Կենսատեխնոլոգիայի բնագավառները, նվաճումները և մեթոդները. անասնաբուժություն, անասնաբուժության բժշկագիտություն, առողջապահություն, բուսաբուժություն, էկոլոգիա և այլն: Գենային ինժեներիան որպես գենետիկական ինժեներիայի բաղկացուցիչ մաս, գեների սինթեզումը, գենի անջատումը դոնորի ԴՆԹ-ից, ԴՆԹ-ի հիբրիդային | | |

| | | |
|--|----------|------------|
| <p>մուլեկուլի ստացումը և ներածումը ռեցիպիենտի օրգանիզմ: Գեմային ինժեներիայի գործնական կիրառումը: Միկրոօրգանիզմների հետ կատարվող գեմային ինժեներիայի առանձնահատկությունները, վիրուսային գեների փոխատեղությունը և տեղադրումը այլ օրգանիզմների մեջ: Սոմատիկ հիբրիդացում: Հիբրիդոմներ: Սաղմերի փոխապատվաստումը և կլոնավորումը: Սաղմերի փոխապատվաստման գիտագործնական նշանակությունը, դոնորների և ռեցիպիենտների ընտրությունը: Սաղմերի գնահատումը և պահպանումը, սաղմերի գնահատման մեթոդները, գենոֆոնդային բանկերի ստեղծումը: Միազիգոտանի երկվորյակների ստացումը վաղ սաղմերի կլոնավորման միջոցով: Մոնոզիգոտ երկվորյակների ստացման գիտագործնական նշանակությունը:</p> | | |
| <p>Չոռհիգիենա</p> | <p>5</p> | <p>150</p> |
| <p>Չոռհիգիենայի խնդիրները և ուսումնասիրման մեթոդները: Օդային միջավայրի զոռհիգիենիկ նշանակությունը: Հիգիենիկ պահանջները հողի նկատմամբ և նրա սանիտարական պահպանությունը: Ջրի, ջրամատակարարման և կենդանիներին ջրելու սանիտարա-հիգիենիկ պահանջները: Կերերի սանիտարական որակի նկատմամբ ներկայացվող հիգիենիկ պահանջները: Անասնապահական շենքերի նկատմամբ ներկայացվող սանիտարա-հիգիենիկ պահանջները: Անասնաշենքերում և հարակից տարածքներում կազմակերպվող դեռատիզացիոն, դեզինսեկցիոն, դեզինֆեկցիոն և դեզոդորացիոն աշխատանքները: Կենդանիների արոտային պահվածքի հետ կապված սանիտարա-հիգիենիկ աշխատանքները: Կենդանիների ողջ մարմնի հիգիենան: Կենդանիների բազմացման հիգիենան: Կենդանիների տեղափոխման ժամանակ իրականացվող սանիտարական և հիգիենիկ պահանջները: Տավարի հիգիենա: Խոզերի հիգիենա: Ոչխարների հիգիենա: Չիերի հիգիենա: Ճագարների և մուշտակատու զազանների հիգիենա: Գյուղատնտեսական թռչունների հիգիենա: Աշխատանքի և աշխատողների անձնական հիգիենան անասնապահության մեջ: Արդյունաբերական հիմունքներով վարվող անասնապահության անասնաբուժական սանիտարական և զոռհիգիենիկ հիմնախնդիրները:</p> | | |
| <p>Կլինիկական ախտորոշաբանություն և ռենտգենաբանություն</p> | <p>6</p> | <p>180</p> |
| <p>Սիմպտոմներ (սինդրոմ) և նրանց դասակարգումը: Կանխագուշակում, ախտորոշում և նրա զարգացումը: Ընդհանուր և հատուկ հետազոտության եղանակները: Տեսանելի լորձաթաղանթների և մակերեսային ավշային հանգույցների հետազոտություն: Ջերմաչափում և նրա նշանակությունը: Շնչական համակարգի դերը և հետազոտումը: Շնչական աղմուկների առաջացումը, տեսակները և խանգարումները: Թոքերի բախում և լսում: Հետազոտման հատուկ մեթոդներ: Մարսողական համակարգի օրգանների տեղագրությունը և հետազոտման եղանակները: Ախորժակ և նրա խանգարումները: Փսխում և նրա նշանակությունը: Ստամոքսի պարունակության ֆիզիկաքիմիական ու մանրադիտակային հետազոտում: Կղկղանքի հետազոտում: Սրտի հրոց, տոները, նրանց տեսակները և հետազոտության եղանակները: Սրտի աղմուկների դասակարգումը: Սրտի արատներ: Հետազոտման հատուկ եղանակները: Միզագոյացում, միզազատություն և նրա խանգարումները: Մեզի լաբորատոր հետազոտում (ֆիզիկական, քիմիական) և նստվածքի մանրադիտակային հետազոտություն: Գանգի և ողնաշարի հետազոտությունը: Ջգայարանների հետազոտությունը: Ջգացողական ոլորտի հետազոտություն: Շարժողական ոլորտի հետազոտություն:</p> | | |

| | | |
|---|---|-----|
| <p>Շարժման կորդինացիայի խանգարումները: Արյան համակարգի հետազոտման նշանակությունը: Արյան ստացման եղանակները: Արյան ֆիզիկաքիմիական հետազոտություն: Հեմոգլոբինի և գունային ցուցանիշի, բիլիռուբինի, ացետոնային մարմնիկների, կարոտինի որոշելը: Ձևաբանական հետազոտություն (երիթրոցիտ, լեյկոցիտ, թրոմբոցիտ): Տարբեր կենդանիների էրիթրոցիտների և լեյկոցիտների ձևաբանական առանձնահատկությունները, նրանց ախտաբանական փոփոխությունները: Լեյկոֆորմուլա և նրա փոփոխությունները: Արյան կենսաքիմիական հետազոտության նշանակությունը: Ոսկրածուծի և նրանից ստացված նմուշի հետազոտությունը: Նյութափոխանակության խանգարումների ախտորոշումը: Սպիտակուցների, ածխաջրատների, ճարպերի, մակրո և միկրոտարրերի, վիտամինների նյութափոխանակության խանգարումների ախտորոշումը: Ռենտգենագիտության հիմունքները: Ռենտգենյան ճառագայթների առանձնահատկությունները, ռենտգեն սարքավորումներ: Մատղաշի հասակային առանձնահատկությունները: Հասակային հիվանդությունների հիմնական համախտանիշները (սինդրոմները): Բիոգեոցենոտիկայի ախտորոշում: Բիոգեոցենոտիկայի ախտորոշման նշանակությունը կենդանիների զանգվածային հիվանդությունների ժամանակ (հողի, ջրի, մթնոլորտի, բուսականության և այլն): Կենդանիների պոպուլյացիաներ (նախիրներ, հոտեր), բիոգեոցենոզների էկոլոգիական նշանակությունը, նրանց զանգվածային հիվանդությունների (էնզոտիաների) ախտորոշման համար:</p> | | |
| <p>Անասնաբուժական դեղաբանություն</p> | 5 | 150 |
| <p>Ընդհանուր ռեցեպտուրա: Մասնավոր դեղաբանություն: Կ.Ն.Հ.-ն ընկճող դեղեր: Կենտրոնական նյարդային համակարգը գրգռող դեղեր: Առավելապես աֆերենտ (զգացող) նյարդավերջույթների վրա ազդող դեղեր: Ջգացող նյարդավերջույթները ընկճող դեղեր: Ջգացող նյարդավերջույթները գրգռող դեղեր: Առավելապես կենտրոնախույս (էֆերենտ) նյարդավերջույթների հատվածում ազդող դեղեր: Խոլիներգիկ (խոլինոմիմետիկ և խոլինոլիտիկ), ադրեներգիկ (ադրենոմիմետիկ և ադրենոլիտիկ) ազդեցությամբ դեղեր: Գանգլիոլիտիկներ: Միոռելաքսանտներ: Հակադեպրեսանտներ և հակահիստամինային պատրաստուկներ: Առանձին օրգան համակարգերի վրա ազդող դեղեր: Սիրտ-անոթային համակարգի և արյան շրջանառության վրա ազդող դեղեր: Հյուսվածքային նյութափոխանակության վրա ազդող դեղեր: Արսենի, յոդի, ֆոսֆորի պատրաստուկներ: Ալկալիական և հողալկալիական մետաղների աղեր: Հորմոններ, ֆերմենտներ, վիտամիններ, իմունոխթանիչներ: Հակամանրէային և հակապարազիտային դեղեր: Ֆորմալդեհիդի խումբ: Թթվածնատու նյութեր: Թթուներ և հիմքեր: Ֆենոլներ, կրեզոլներ: Քիմիոթերապևտիկ դեղեր: Ներկանյութերի խումբ: Սուլֆամիլամիդային պատրաստուկներ: Հակաբիոտիկներ: Հակապարազիտային, հակաճիճվային, ինսեկտիցիդ դեղեր: Ջոնցիդներ:</p> | | |
| <p>Անասնաբուժական ռադիոկենսաբանություն</p> | 3 | 90 |
| <p>Անասնաբուժական ռադիոկենսաբանության խնդիրները, նպատակները: Ռադիացիոն անվտանգության հիմունքները և ռադիոակտիվ նյութերի հետ աշխատանքների կազմակերպումը: Անասնաբուժական ռադիոկենսաբանության ֆիզիկական հիմունքները, ռադիոակտիվականության երևույթը, բնական և արհեստական ռադիոակտիվականություն, ռադիոակտիվ տրոհման օրենքը, ռադիոակտիվ ընտանիքներ: Ալֆա, բետա, գամմա, ճառագայթների փոխազդեցությունը նյութի</p> | | |

| | | |
|---|----------|-----------|
| <p>հետ: Իոնացնող ճառագայթների դոզաչափում և ճառագայթաչափում: Իոնացնող ճառագայթման կենսաբանական ազդեցությունը, ռադիոռեզիստենտականություն: Իոնիզացնող ճառագայթների թունաբանություն, դասակարգումը ըստ ռադիոթունաբանության, ռադիոնուկլիդների բաշխումը օրգանիզմում, կուտակումը օրգաններում և հյուսվածքներում: ճառագայթային ախտահարումներ: ճառագայթային հիվանդության սուր և քրոնիկ, ճառագայթային այրվածքներ և ճառագայթման հեռավոր հետևանքներ: ռադիոէկոլոգիայի խնդիրները, ռադիոնուկլիդների միգրացիան, կենսաբանական շղթայով՝ հող-բույս-կենդանի-գյուղ. մթերք-մարդ: Գյուղ. մթերքի ռադիոնուկլիդների ներթափանցման կանխարգելումը, սահմանափակ թույլատրելի դոզաներ, կերերում, գյուղ. մթերքում, կենդանական և բուսական ծագում ունեցող հումքում: Ռադիոակտիվ ախտոտվածության պայմաններում գյուղատնտեսության կազմակերպումը: Անասնաբուժական հսկողության օբյեկտների ռադիացիոն էքսպերտիզա: Ռադիացիոն ստուգման մեթոդները: Ռադիոմետրիկ էքսպերտիզայի խնդիրները և նպատակները: Նմուշների ընտրումը և տեղափոխումը: Անասնաբուժական ռադիոքիմիական էքսպերտիզա, խնդիրները: Ռադիոակտիվ իզոտոպների օգտագործումը ռադիացիոն կենսատեխնոլոգիայում:</p> | | |
| <p>Գյուղատնտեսական էկոնոմիկա</p> | <p>2</p> | <p>60</p> |
| <p>Աշխատանքի կազմակերպում առարկան, մեթոդը և խնդիրները: Աշխատանքի կազմակերպման սկզբունքները և հիմնական ուղղությունները: Աշխատանքի պայմանները: Աշխատանքի հոգեֆիզիոլոգիական, սանիտարահիգիենիկ և գեղագիտական պայմանները: Աշխատանքի և հանգստի ռացիոնալ ռեժիմները: Մարդու աշխատունակությունը և նրա դինամիկան աշխատանքային օրվա, շաբաթվա, ամսվա և տարվա ընթացքում: Աշխատատեղերի կազմակերպումը, ատեստացիան և ռացիոնալացումը: Աշխատանքային գործընթացների ռացիոնալ կազմակերպման սկզբունքները: Հիմնական աշխատանքային գործընթացների կազմակերպումը անասնաբուժությունում: Աշխատանքի նորմավորման հիմնական հարցերը գյուղատնտեսությունում: Հիմնական նորմազոյացնող գործոնները անասնաբուժությունում: Անասունների սպասարկման նորմաների հաշվարկման մեթոդիկան: Աշխատանքի վարձատրության կազմակերպումը: Տարիֆային համակարգը, նշանակությունը և տարրերը: Տարբեր կազմակերպարկարական ձևերի ձեռնարկություններում նյութական խրախուսումը: Տնտեսագիտական սոցիոլոգիան որպես գիտություն: Աշխատաշուկայի ձևավորումը և զարգացումը սոցիոլոգիայում: Մարդը տնտեսական կազմակերպությունում և աշխատանքային հարաբերություններում: Սոցիալ-տնտեսական շերտավորումը և դրա բնութագրումը: Գործարարության հիմնախնդիրները տնտեսագիտական սոցիոլոգիայում: Սոցիալ-տնտեսական կոնֆլիկտներ: Մարդը տնտեսական գաղափարախոսության համակարգում: Փող, ֆինանսներ, բորսա, հարկեր, դրանց սոցիալ-հոգեբանական տեսակյունները:</p> | | |
| <p>Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում</p> | <p>2</p> | <p>60</p> |
| <p>Ձեռնարկատիրական գործունեության իրավական կարգավորումը: Մասնավոր անասնաբուժական գործունեություն: Անասնաբուժական ընկերություն: Անասնաբուժական կոոպերատիվ և մանր ձեռնարկություն: Պետական անասնաբուժական հիմնարկությունների կողմից իրականացվող վճարովի անասնաբուժական ծառայություն: Անասնաբուժական գործունեության արտոնագրումը:</p> | | |

| | | |
|--|----------|------------|
| <p>Ձեռնարկատիրական անասնաբուժական գործունեության ռիսկը: Գնագոյացումը ձեռնարկատիրական ոլորտում: Ֆինանսավորումը անասնաբուժական ձեռնարկությունում: Անասնաբույժ ձեռներեցի բիզնես պլանը: Անասնաբուժական ձեռներեցության հարկադրումը: Մարքեթինգ անասնաբուժական ձեռնարկատիրությունում: Անասնաբուժական մենեջմենտ: Պետական կարգավորումը և հոկոդությունը ձեռնարկատիրական գործունեության ոլորտում: Անասնաբուժական գործավարություն: Անասնաբույժ ձեռներեցի էթիկան: Կոմերցիոն անասնաբուժական հիմնարկությունների բիզնես ծրագրի կազմման նորմատիվային նյութերը:</p> | | |
| <p>Անասնապահական մթերքների արտադրության հիգիենա</p> | <p>2</p> | <p>60</p> |
| <p>Կաթի ստացման սանիտարա-հիգիենիկ ռեժիմը: Կաթի նախնական մշակման, պահպանման, տեղափոխման հիգիենա: Ձեռքի և մեքենայացված կթի հիգիենիկ նշանակությունը: Կաթնամանեղենի և կաթի սարքավորումների մաքրումն ու ախտահանումը, սանիտարական վիճակի հսկողության կազմակերպումը: Կաթի սանիտարական որակի գնահատականը: Հիվանդ կենդանիներից ստացված կաթի վնասազերծման եղանակները: Մսի արտադրության ձեռնարկություններին և սարքավորումներին ներկայացվող հիգիենիկ և սանիտարական պահանջները: Մսի վերամշակման ձեռնարկությունների տեղի, կառույցի, շինանյութի ընտրությանը ներկայացվող հիգիենիկ պահանջները: Մսի ձեռնարկություններում սանիտարա-մանրէաբանական հսկողության կազմակերպումը: Մսի արտադրությունից ստացված հոսքային ջրերի վարակազերծումը: Կենդանիների նախասպանդային պահվածքի հիգիենա: Կենդանիների վերամշակման արտադրական պրոցեսների հիգիենա: Մսի արդյունաբերության ձեռնարկություններում սանիտարական մշակման սկզբունքները և միջոցները: Մսի արդյունաբերության արտադրամասերի սանիտարական մշակման առանձնահատկությունները: Անասնաբուժական և հիգիենիկ պահանջները թռչնի վերամշակման ժամանակ: Ձվի սանիտարական զննում: Երշիկեղենի արտադրության հիգիենա: Մսի պահածոների արտադրության հիգիենա: Ձկան արդյունաբերությունում սանիտարական մշակման առանձնահատկությունները:</p> | | |
| <p>Ախտաբանական անատոմիա</p> | <p>5</p> | <p>150</p> |
| <p>Ապոպտոզ , նեկրոզ , մահ, հետմահյա նշաններ` դիակային սառեցում, փայտացում, հիպոստազներ, իմբիբիցիա: Ատրոֆիա, պատճառները, ախտածնությունը, ձևաբանական փոփոխությունները: Դիստրոֆիաների ընդհանուր բնութագրությունը, պարենքիմատոզ, անոթահենքային և խառը դիսպրոտեինոզներ: Հատիկային ,հիալինակաթիլային, հիդրոպիկ, եղջերային դիստրոֆիա: Պարենքիմատոզ ճարպային դիստրոֆիա, պարենքիմատոզ ածխաջրային դիստրոֆիա, գլիկոգենի փոխանակության խանգարումները: Անոթահենքային դիստրոֆիաների բնութագիրը, մուկոիդ ուռչեցում, ֆիբրինոիդ ուռչեցում, հիալինոզ, ամիլոիդոզ: Չեզոք ճարպերի փոխանակության խանգարումները: Անոթահենքային ածխաջրային դիստրոֆիաներ: Խառը դիստրոֆիաներ, քրոմոպրոտեիդների փոխանակության խանգարումներ` հեմոսիդերին, հեմատոիդին, լեղվային գունակներ: Էնդոգեն և էկզոգեն գունակների փոխանակության խանգարումներ: Նուկլեոպրոտեիդների և գլիկոպրոտեիդների փոխանակության խանգարումներ: Հանաքային փոխանակության խանգարումներ: Ուռուցքներ. Լեյկոզներ: Գ/Կ կրուպոզ բրոնխոպնևմոնիա, դիսպեպսիա, ցիռոզ, գլոմերուլոնեֆրիտ: Սիբիրախտ, սալմոնելյոզ, կոլիբակտերիոզ, պաստերելյոզ,</p> | | |

| | | |
|--|---|-----|
| <p>լեպտոսպիրոզ, բրադզոտ, խշխշան պալար, բոտուլիզմ, կատաղություն, տուբերկուլյոզ, բրուցելյոզ, խլնախտ, ժանտախտ, դաբաղ, բոտրիոմիկոզ, ակտինոմիկոզ, դիկտիոկաուլյոզ, տրիխինելյոզ, դելաֆանդիոզ հիվանդությունների պաթոմորֆոլոգիան</p> | | |
| <p>Չերծում և դատաանասնաբուժական փորձաքննություն</p> | 7 | 175 |
| <p>Դատաանասնաբուժական առարկան ու բովանդակությունը, Դատաանասնաբուժական հերձման նպատակները, մեթոդները և խնդիրները, փորձագետի իրավունքներն ու պարտականությունները: Փորձաքննության հիմնական տեսակները և դրանց կատարման կարգը, թանառալոգիա: Գ/Կ դիակների դատաանասնաբուժական փորձաքննություն, մահվան վաղեմության որոշում, դիակային երևույթներ՝ դիակային սառեցում, փայտացում, հիպոստազներ, հետմահյա արյան մակարդում, գ/կ ոսկորների ներքին օրգանների դատաանասնաբուժական փորձաքննություն, ասֆիքսիաներից առաջացած մահվան փորձաքննություն, ջրահեղձման լաբարատոր ուսումնասիրության եղանակները, արյան հետքի, մազի, դատակենսաբանական փորձաքննություն, դիակների և առանձին օրգանների դատաանասնաբուժական փորձաքննություն արտաշիրիմում, հանկարծամահություն, փորձաքննություն առք ու վաճառքի դեպքում, դատական թունաբանություն, հիվանդ և անկած կենդանիների մահի փորձաքննություն, անասնաբուժական աշխատողների դատական պատասխանատվությունը, մեխանիկական վնասվածքների փորձաքննություն, բարձր և ցածր ջերմաստիճանի ներգործությունից առաջացած վնասվածքների փորձաքննություն: Վնասվածքները և մահը էլեկտրականության ու ճառագայթային էներգիայի ներգործությունից: Պտղի և նորածինների դիակների փորձաքննություն, Գյուղ. կենդանիների փորձաքննություն ծննդօգնության, պերինատալ պաթոլոգիայի և գինեկոլոգիայի դեպքում: Ախտաբանական նյութի հետազոտումը և դիակների ոչնչացման կարգը: Դատական եզրակացությունների ձևակերպման կարգը:</p> | | |
| <p>Կլինիկական կենսաքիմիա</p> | 4 | 105 |
| <p>Ամինաթթուները, պեպտիդները, սպիտակուցները: Հատկությունները բաժանման, հայտնաբերման և նմանեցման եղանակները: Պեպտիդների առաջնային կառուցվածքի պարզաբանում: Սպիտակուցի կազմավորման մակարդակները, պայմանավորող կապերը և գոյածությունները: Սպիտակուցի կառուցվածքը և ֆունկցիան: Ֆերմենտները: Ֆերմենտային կատալիզ: Սուբստրատի խտության ազդեցությունը: Միքսելիս- Մենթենի տեսությունը: Կոֆակտոր և կոֆերմենտ հասկացությունը: Ֆերմենտների սուբստրատային սպեցիֆիկությունը, գործունեության կարգավորումը: Ֆերմենտների կիրառումը: Վիտամինները և միկրոտարրերը: Վիտամինները որպես սննդի անփոխարինելի օրգանական միկրոբաղադրամասեր: Վիտամինների դասակարգումը ըստ լուծելիությանը և ֆունկցիայի՝ կոֆերմենտային, հորմոնալ և հակաօքսիդանտային: Մակրո և միկրոտարրերի դերը նյութափոխանակության պրոցեսներում: Կենսաէներգետիկա: Թերմոդինամիկայի օրենքները և կենդանի համակարգերը: Քիմիական էներգիայի սինթեզը: Շնչառություն: Օքսիդացիոն ֆոսֆորիլացում: Ֆոսֆորիլացման մեխանիզմները: Ածխաջրատները, դրանց ֆունկցիաները, քայքայումը և սինթեզը: Գլյուկոզի աերոբ և անաերոբ քայքայումը, նրա քայքայման լրացուցիչ ուղիները, դրանց նշանակությունը բջջի կենսագործունեությանը: Այլ մոնոսախարիդների մուտքը գլիկոլիտիկ</p> | | |

| | | |
|--|----------|------------|
| <p>շղթա: Գլյուկոզի և գլիկոգենի սինթեզը: Ածխաջրերի նյութափոխանակության կարգավորումը: Լիպիդները և նրանց նյութափոխանակությունը: Լիպիդների դերը կենսաբանական թաղանթների կազմավորմանը և ֆունկցիաներում: ճարպաթթուների նյութափոխանակությունը՝ նրանց կատաբոլիզմը և սինթեզը: Բևեռացված լիպիդների նյութափոխանակությունը: Ֆոսֆատիդների, գլիկոլիպիդների և ստերինների կենսասինթեզը: Ազոտային նյութափոխանակությունը: Ամոնիակի առաջացման և չեզոքացման ուղիները: Տրանս- և դեզամինացման ռեակցիաները: Առանձին ամինաթթուների քայքայումը և սինթեզը: Միզանյութի սինթեզը: Ամինաթթվային նյութափոխանակության ժառանգական խանգարումները: Պուրինային և պիրիմիդինային հիմքերի սինթեզը և քայքայումը: Նյութափոխանակային գործընթացների ինտեգրացումը, դրա կարգավորման նյարդահումորալ մեխանիզմները: Սսի հյուսվածքների (մկանային, շարակցական, ճարպային, ոսկրային և կրճիկայային) կենսաքիմիական կազմը: Սսի հասունացման ժամանակ ընթացող ավտոլիտիկ կենսաքիմիական փոխարկումները՝ պիզմենտների, ածխաջրերի, լիպիդների փոփոխությունները: Սսի սառեցման, աղադրման ջերմային մշակման համի և բուրմունքի ձևավորման ժամանակ տեղի ունեցող կենսաքիմիական փոխարկումները: Արյան կենսաքիմիական կազմը, շնչառական ֆունկցիան, մակարդման քիմիական սխեման: Կաթի կենսաքիմիական բաղադրությունը, մթերային արժեքը պայմանավորվող ցուցանիշները: Կաթնամթերքների հասունացման, համային և արոմատիկ միացությունների առաջացման կենսաքիմիական սխեմաները: Լիպոլիտիկ, օքսիդացնող և կենսաքիմիական բնույթ կրող արատներ:</p> | | |
| <p>Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ</p> | | |
| <p>ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ</p> | | |
| <p><i>Բուհական քաղաղրիչ</i></p> | | |
| <p>Անասնաբուժական սանիտարիա</p> | <p>5</p> | <p>150</p> |
| <p>Ախտահանությունը և նրա նշանակությունը վարակիչ հիվանդությունների պայքարի և պրոֆիլակտիկայի գործում: Ախտահանության տեսակները, մեթոդները և միջոցները: Միջատների դեմ պայքարի ձևերը և սանիտարական նշանակությունը: Կրծողների դեմ տարվող պայքարի ձևերը և դրանց սանիտարական նշանակությունը: Անասնապահական օբյեկտների օդի սանիտարական վիճակի գնահատումը, օդային միջավայրի նկատմամբ ներկայացվող հիգիենիկ և սանիտարական պահանջները: Գոմաղբի հավաքման և վարակազերծման եղանակները: Արդյունաբերական ձեռնարկություններից հոսքային ջրերի վարակազերծումը: Ջրաղբյուրների սանիտարիան և հիգիենան: Հողի սանիտարական գնահատումը: Անասնաբուժական սանիտարիան տրանսպորտում: Կաթի ստացման հիգիենան և սանիտարիան ֆերմաներում: Կենդանական ծագման հումքի ստացման և վերամշակման ժամանակ անասնաբուժա-սանիտարական միջոցառումները: Անասնաբուժական սանիտարական բացթողիչ, կառուցվածքը, դերն ու նշանակությունը: Անասնաբուժական սանիտարական միջոցառումների անցկացման ժամանակ անձնական հիգիենան և անվտանգության տեխնիկան: Կենդանիների խնամքի և պահվածքի սանիտարիան: Անասնապահական շենքերի մեխանիկական մաքրում և վարակազերծում: Անասնաբուժական սանիտարական միջոցառումները անասնապահական թափոնների օգտագործման ժամանակ: Անասնաբուժական</p> | | |

| | | |
|--|---|----|
| սանիտարիան մսի և թռչնամսի վերամշակման ձեռնարկություններում, սպանդի կետերում: Անասնաբուժական սանիտարիան արտահանման և ներմուծման գործողությունների ժամանակ: Կենդանիների դիակների վարակազերծման մեթոդները: Խմելու ջրի մաքրումը և վարակազերծումը: | | |
| Բուսաբուժական մթերքների ապրանքագիտություն և ստանդարտացում | 3 | 90 |
| Հացահատիկը և նրա վերամշակումից ստացված մթերքները: Հատիկաընդեղենները և նրանց վերամշակումից ստացվող մթերքները: Արմատապտղավորներ և պալարապտղավորներ, դրանց վերամշակումից ստացվող մթերքները: Յուղատուներ և եթերայուղատուներ, նրանց վերամշակումից ստացվող մթերքները: Ծխախոտ և այլ նարկոտիկ բույսեր, նրանց վերամշակումից ստացվող ապրանքներ: Բանջարեղեններ, նրանց թարմ և վերամշակված մթերքների օգտագործումը, պտուղներ, հատապտուղներ, նրանց թարմ և վերամշակված մթերքները: | | |
| Մսի և մսամթերքի տեխնոլոգիա և տեխնոքիմիական վերահսկողություն | 3 | 90 |
| Կենդանիների տեսակները որպես հումք, անասունների տեղափոխումը, նախամորթյան խնամքը: Մսի կազմը և հատկությունները, մսի հյուսվածքային կառուցվածքը: Խոշոր եղջերավոր անասունների մորթի կազմակերպում: Խոզերի մորթը առանց մաշկահանման և կրուպոնով մշակման: Թռչունների մորթը և փետուրների մշակումը: Մսի սառնարանային մշակումը: Երշիկների արտադրության տեխնոլոգիան (եփված, կիսաապխտած և հումապխտած երշիկներ): Խոզապուխտների արտադրության տեխնոլոգիան: Պահածոների արտադրության տեխնոլոգիան: Կիսաֆարիկատների արտադրության տեխնոլոգիան: Մսի որակավորումը: | | |
| Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա և տեխնոքիմիական վերահսկողություն | 3 | 90 |
| Անասնաբուժական սանիտարիա և փորձաքննություն մասնագիտությունում կարևոր դեր ունի կաթնամթերքների տեխնոքիմիական վերահսկողությունը և կաթնամթերքների տեխնոլոգիան: Ըստ մասնագիտական պահանջումների կազմված է ներկա ծրագիրը, այն է՝ կովի կաթի կազմը և հատկությունները, ֆիզիկաքիմիական, կենսաբանական, կենսաքիմիական, տեխնոլոգիական և ֆիզիկական հատկությունները: Կաթի կազմի և հատկությունների փոփոխությանը կապված ջերմային մշակման հետ, սառեցնելիս, խտացնելիս, չորացնելիս: Ցածր ջերմաստիճանի ազդեցությունը կաթի պահպանման վրա: Կաթի արատները, մաստիտային կաթի հայտնաբերումը: Կաթի քաղաքային գործարանների արտադրած մթերքների տեխնոքիմիական վերահսկողությունը: Պաղպաղակի տեխնոլոգիան և տեխնոքիմիական վերահսկողությունը: Թթու կաթնամթերքների տեխնոլոգիաները և տեխնոքիմիական վերահսկողությունը (մածուն, թթվասեր, կեֆիր, կաթնաշոռ և այլն): Պանիրների դասակարգումը, տեխնոլոգիաները, տեխնոքիմիական վերահսկողությունը: | | |
| Սանիտարական մանրէակենսաբանություն | 2 | 60 |
| Սանիտարական մանրէակենսաբանություն առարկայի նպատակը և խնդիրները: Սանիտարացուցանչական միկրոօրգանիզմները և նրանց ներկայացվող պահանջները: Հետազոտությունների եղանակները և սկզբունքները: Հողի սանիտարա-բակտերիոլոգիական հետազոտության եղանակները: Ջրի սանիտարա-բակտերիոլոգիական հետազոտությունը: Օդի սանիտարա-բակտերիոլոգիական հետազոտությունը: | | |

| | | |
|--|------------------|-------------------|
| <p>Սննդամթերքի սանիտարա- բակտերիոլոգիական հետազոտությունը: Սննդային ինֆեկցիաների, տոքսիկոինֆեկցիաների և տոքսիկոզների հարուցիչները, դրանց ախտորոշման սկզբունքները և եղանակները: Սննդի արդյունաբերության ձեռնարկություններում սարքավորումների, իրերի, գույքի և նյութեղենի սանիտարա- բակտերիոլոգիական հետազոտությունը, ձեռքերի մաքրության ստուգումը: Կերերի միկրոֆլորան (սիլոս, սենած, խոտ): Ախտածին մանրէների և մանրէական թույների անջատումը կերերից: Գոմաղբի միկրոֆլորան և հասունացման ընթացքում միկրոբիոլոգիական պրոցեսները:</p> | | |
| <p>Թունաբանություն</p> | <p>6</p> | <p>180</p> |
| <p>Ընդհանուր անասնաբուժական թունաբանություն: Մասնավոր թունաբանություն: Կենդանիների թունավորումները պարարտանյութերից, թունաքիմիկատներից (ինսեկտիցիդներ, ֆունգիցիդներ, հերբիցիդներ, զոոցիդներ և այլն), օրգանական, անօրգանական, սինթետիկ, հանքային, մետաղական և այլ բնույթի քիմիական միացություններից (քիմիական տոքսիկոզներ): Կերային տոքսիկոզներ: Թունավորումներ նյարդային, մարսողական, շնչառական, արյունային համակարգերը ախտահարող, կաթի և մսեղիքի որակը փոխող բույսերից (ֆիտոտոքսիկոզներ): Կենդանիների թունավորումները սնկերով վարակված կերերով (միկոտոքսիկոզներ): Կենդանիների դեղորայքային թունավորումները: Կենդանիների թունավորումները մարտական թունավոր նյութերից: Կենդանիների թունավորումները կենդանական ծագման թույներից (միջատների, օձի և այլն):</p> | | |
| <p>Ծննդագիտություն, գինեկոլոգիա և բազմացման կենսատեխնիկա</p> | <p>6</p> | <p>180</p> |
| <p>Էգ և արու կենդանիների սեռական օրգանների անատոմա- ֆիզիոլոգիական առանձնահատկությունները: Սերմնավորման օպտիմալ ժամանակի որոշումը: Կենդանիների արհեստական սերմնավորումը: Սերմնահեղուկի ստացումը, գնահատումը, նոսրացումը, պահպանումը և ներարկումը: Սերմնաբջիջների կառուցվածքը, ֆիզիոլոգիան, կենսաքիմիան և էներգետիկան: Անասնաբուժասանիտարական միջոցառումները սերմնավորման ժամանակ: Բեղմնավորում, նրա փուլերը: Զիգոտի փոխպատվաստման վիրահատական և կոնսերվատիվ եղանակները: Հղիության ֆիզիոլոգիան: Հղիության ախտաբանությունը: Հիվանդությունների ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը: Ծննդաբերության և հետծննդյան շրջանի ֆիզիոլոգիան: Օգնություն նորմալ և ախտաբանական ծննդաբերության ժամանակ: Օպերատիվ ծննդագիտություն, ծննդալուծիչ վիրահատումներ, պտղահատում: Ծննդաբերության, հետծննդյան շրջանի և նորածինների հիվանդությունների ախտորոշումը, բուժումը և կանխարգելումը: Սանիտարական միջոցառումները սերմնավորման ժամանակ: Մաստիտներ, կաթնագեղձի մաշկի և պտուկների հիվանդությունների ախտորոշումը, բուժումն ու կանխարգելումը, որպես սանիտարապես մաքուր կաթ ստանալու նախապայման: Անասնաբուժական գինեկոլոգիա: Կենդանիների բնածին, ծերունական, կերային, շահագործական, կլիմայական, արհեստական և սինպտոմատիկ անպտղություններ: Գինեկոլոգիական հիվանդությունների ախտորոշումը և բուժումը:</p> | | |
| <p>Ներքին ոչ վարակիչ հիվանդություններ</p> | <p>10</p> | <p>290</p> |
| <p>Ներքին ոչ վարակիչ հիվանդությունների ախտորոշումը, կանխարգելումը և բուժումը: Նյութափոխանակության խանգարման հիվանդություններ (հիպովիտամինոզներ, հանքային նյութերի`</p> | | |

| | | |
|---|------------------|-------------------|
| <p>կալցիումի, ֆոսֆորի, յոդի և այլնի փոխանակության խանգարումներ): Արյան համակարգի հիվանդություններ՝ թրոմբոցիտոպենիա, անեմիաներ և դրանց տեսակները, լեյկոցիտոպենիա: Սիրտ-անոթային համակարգի հիվանդություններ՝ տրավմատիկ և ոչ տրավմատիկ պերիկարդիտներ, միոկարդիտներ և միոկարդիոզներ, թրոմբոզ, թրոմբոֆլեբիտ: Նյարդային համակարգի ֆունկցիոնալ և օրգանական հիվանդություններ՝ էպիլեպսիա, տետանիա, խորեա և նևրոզներ: Շնչառական համակարգի հիվանդություններ՝ բրոնխոպնևմոնիա, կատառալիս և կրուպոզ պնևմոնիա, չոր և թաց պլևրիտներ: Մարսողական համակարգի հիվանդություններ՝ գաստրիտներ, գաստրոէնտերիտներ, նախաստամոքսների հիպատոնիա և գերլցում, գրքի խցանում, նախաստամոքսների փքանք, կոլիկներով ընթացող հիվանդություններ՝ ձիերի ստամոքսի սուր լայնացում, աղիների մեթրորիզմ, աղիների ներբնում և ուլորում, աղիքային քարեր: Լյարդի և լեղուղիների հիվանդություններ՝ հեպատիտ, դիստրոֆիա, ցիռոզ, խոլանգիտ և խոլիցիստիտ: Միզային համակարգի հիվանդություններ՝ նեֆրիտներ, նեֆրոզներ, պիելոնեֆրիտ, միզաքարային հիվանդություններ: Ներզատիչ գեղձերի հիվանդություններ՝ վահանաձև գեղձի բորբոքում (խալիա): Իմուն համակարգի հիվանդություններ՝ իմունային անբավարարություն: Մատղաշների հիվանդություններ՝ բրոնխոպնևմոնիա, դիսպեպսիա, խոճկորների ալիմենտար անեմիա, սպիտակմկանային հիվանդություն): Թռչունների և մորթատու գազանների ոչ վարակիչ հիվանդություններ՝ պերոզ, քուչի խցանում, հիպովիտամինոզներ և թունավորումներ:</p> | | |
| <p>Համաճարակաբանություն և ինֆեկցիոն հիվանդություններ</p> | <p>11</p> | <p>313</p> |
| <p>Համաճարակաբանություն առարկան և խնդիրները, հետազոտության մեթոդները, ինֆեկցիոն հիվանդություններ: Օրգանիզմի իմունաբանական ռեակտիվությունը և իմունիտետ: Համաճարակային պրոցես և նրա շարժիչ ուժերը: Համաճարակային օջախ և ինֆեկցիոն հիվանդությունների բնական օջախավորումը: Համաճարակաբանական հետազոտության հիմունքները: Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների էվոլյուցիան: Կենդանիների ինֆեկցիոն հիվանդությունների անվանակարգումը և դասակարգումը: Ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելումը: Առողջացման և վերացման միջոցառումները ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում: Ախտահանություն: Կենդանիների բուժումը ինֆեկցիոն հիվանդությունների դեպքում: Մի քանի կենդանական տեսակների համար ընդհանուր հիվանդություններ (սիբիրախտ, դաբաղ, տուբերկուլյոզ, բրուցելյոզ, կատաղություն, լեպտոսպիրոզ, լիստերիոզ, պաստերելյոզ, ծաղիկ և այլն): Որոճող կենդանիների հիվանդություններ (խշխշան պալար, պարատուբերկուլյոզ, խ.ե.կ. ժանտախտ, չարորակ հարբուխային տենդ, խ.ե.կ. լեյկոզ, բրադզոտ և այլն): Խոզերի հիվանդություններ (ժանտախտ, աֆրիկյան ժանտախտ, կարմրախտ և այլն): Չիերի հիվանդություններ (խլնախտ, գեղձատապ և այլն): Մատղաշների հիվանդություններ(սալմոնելյոզ, կոլիբակտերիոզ): Թռչունների հիվանդություններ: Շների և մուշտակատու գազանների հիվանդություններ:</p> | | |
| <p>Մակաբուժաբանություն և ինվազիոն հիվանդություններ</p> | <p>9</p> | <p>270</p> |
| <p>Տրեմատոդներ և տրեմատոդոզներ, դրանց նկատմամբ իրականացվող անասնաբուժա-սանտարական միջոցառումները: Ցեստոդներ և ցեստոդոզներ. շղթայաձև և ժապավենաձև որդերի կողմից հարուցվող հիվանդությունները և դրանց նկատմամբ իրականացվող</p> | | |

| | | |
|--|----------|------------|
| <p>անասնաբուժա-սանտարական միջոցառումները: Ենմատողներ և ենմատողոզներ՝ օքսիուրատողներ, ասկարիդատողներ, մարսողական և շնչառական համակարգի ստրոնգիլատողներ, կենդանիների տրիխոցեֆալոզներ, կենդանիների ֆիլարիատողներ, օնխոցերկոզներ, ականտոցեֆալոզներ, դրանց նկատմամբ իրականացվող անասնաբուժա-սանտարական միջոցառումները: Սպորավորների, մտրակավորների, թարթիչավորների, նախակորիզավորների կողմից հարուցվող հիվանդությունները և դրանց նկատմամբ իրականացվող անասնաբուժա-սանտարական միջոցառումները: Պարազիտոֆորմային տզեր. իքստոլային, արգասային և գամազոդային տզեր և դրանց նկատմամբ իրականացվող պայքարի միջոցառումները: Ակարիֆորմային տզերի կողմից հարուցվող հիվանդությունները և դրանց նկատմամբ իրականացվող անասնաբուժա-սանտարական միջոցառումները: Կենդանիների էնտոմոզներ: Բոռերի կողմից հարուցվող հիվանդությունները, մշտական մակաբույծվող միջատների կողմից հարուցվող հիվանդությունները: Մելոֆագոզներ, լվակրություն, փայտոջիլներ, զոոֆիլ ճանճեր, զազիրք, խավարասերներ, մաշկակերներ և դրանց նկատմամբ իրականացվող անասնաբուժա-սանտարական միջոցառումները:</p> | | |
| <p>Անասնաբուժական վիրաբուժություն</p> | <p>8</p> | <p>240</p> |
| <p>Ընդհանուր տեղեկություններ վիրահատումների մասին: Կենդանու նախապատրաստումը վիրահատության, ֆիքսումը և անզգայացումը: Ինֆեկցիայի կանխարգելումը վիրահատումների ժամանակ: Վիրահատման բաղկացուցիչ տարրերը: Հյուսվածքների հատում, միացում, արյունահոսության դադարեցում, արյան փոխներարկում: Ուսմունք վիրակապերի մասին: Ընդհանուր վիրաբուժություն, հասկացողություն տրավմատիզմի մասին: Վիրաբուժական ընդհանուր և յուրահատուկ ինֆեկցիաներ: Մեխանիկական բաց և փակ վնասվածքներ: Օտար մարմիններն օրգանիզմում: Ջերմային, քիմիական, էլեկտրական և ճառագայթային վնասվածքներ: Դրանց բուժումը և կանխարգելումը: Մաշկի, մկանների, ջլերի, ջլաբուճոցների, լորջապարկերի հիվանդություններ: Հոդերի, նյարդային համակարգի, արյան և ավշային անոթների հիվանդություններ: Նորագոյացություններ, առաջացման պատճառները, դասակարգումը, ախտորոշումը և բուժումը: Սմբակների և կճղակների անատոմիան և գործնության մեխանիզմը, հետազոտման եղանակները, հիվանդությունները և նրանց բուժումը: Կենդանիների սովորական և օրթոպեդիկ պայտումը: Աչքի անատոմիան և ֆունկցիան: Նրա հետազոտման եղանակները: Աչքի և նրա օժանդակ օրգանների հիվանդությունները, դրանց ախտորոշումը և բուժումը:</p> | | |
| <p>Անասնաբուժական մթերքների ապրանքագիտություն և ստանդարտացում</p> | <p>5</p> | <p>150</p> |
| <p>Անասնաբուժական մթերքների և հումքի ապրանքագիտություն առարկան և խնդիրները: Անասնաբուժական մթերքների և հումքի դասակարգումն ու քիմիական կազմը: Անասնաբուժական մթերքների և հումքի ֆիզիկական հատկությունները: Անասնաբուժական մթերքների և հումքի որակի ապրանքագիտական գնահատման եղանակները ու պահպանման հիմունքները: Որակի կառավարումը: Որակի հիմնական սահմանումները և հասկացությունները: Որակի գնահատումը, որակի կառավարման համալիր համակարգը: Ապրանքի որակի տեխնիկատնտեսական ցուցանիշները: Ստանդարտավորման զարգացման համառոտ պատմությունը: Ստանդարտավորման</p> | | |

| | | |
|---|-----------|------------|
| <p>հիմնական տերմինները, սահմանումները և մեթոդները: Ստանդարտավորման տեսական հիմունքները: Ստանդարտացման նպատակները, խնդիրները և տեսակները: Ստանդարտների պլանավորման ու գրանցման կարգը: Համալիր ստանդարտավորում: Գյուղ. մթերքների ստանդարտավորման առանձնահատկությունները: Միջազգային ստանդարտավորում: Սերտիֆիկացման հիմունքները: Միջազգային սերտիֆիկացում: Մասնավոր ապրանքագիտություն: Մսի, մսամթերքների ապրանքագիտություն: Մսի սննդարար արժեքը և առանձնահատկությունները: Ենթամթերքների ապրանքագիտությունը: Կերային և տեխնիկական ապրանքների ապրանքագիտությունը: Կաթի և կաթնամթերքների ապրանքագիտությունը: Չվի և ձվամթերքների ապրանքագիտությունը: Մեղրի և մեղվաբուծական այլ մթերքների ապրանքագիտությունը: Չկան և ձկնամթերքների ապրանքագիտությունը: Անասնաբուծությունից ստացվող հումքի ապրանքագիտությունը:</p> | | |
| <p>Անասնաբուծական սանիտարական փորձաքննություն</p> | <p>18</p> | <p>471</p> |
| <p>Տվյալներ անասնաբուծական սանիտարական փորձաքննության պատմության վերաբերյալ: Մսի արդյունաբերության հումքը և հումքի բազաները: Սպանդային կենդանիների ընդհանուր բնութագիրը և բովանդակության որոշումը: Կենդանիների փոխադրումը վերամշակման ձեռնարկություններ և անասնաբուծական սանիտարական միջոցառումները տրանսպորտում: Կենդանիների վերամշակման ձեռնարկությունների նշանակությունը և տիպերը: Կենդանիների նախասպանդային պահպանման նշանակությունը և ռեժիմը: Կենդանիների առաջնային վերամշակման տեխնոլոգիայի հիմունքները: Սպանդային մթերքների անասնաբուծական սանիտարական փորձաքննության կազմակերպումը ու մեթոդիկան: Մսեղիքի և ենթամթերքների դրոշմումը: Ուսմունք մսի մասին՝ մորֆոլոգիա, քիմիա, ապրանքագիտություն, հասունացում: Մտում տեղի ունեցող անցանկալի փոփոխությունները պահպանության ընթացքում: Սննդային տոքսիկոլոգիկոֆեկցիաներ և տոքսիկոզներ: Սպանդային մթերքների անասնաբուծական սանիտարական փորձաքննությունը ինֆեկցիոն, ինվազիոն և ոչ վարակիչ հիվանդություններ հայտնաբերելիս, ինչպես նաև կենդանիների թունավորումների և ճառագայթիչ ախտահարումների ճամանակ: Մսի անասնաբուծական սանիտարական փորձաքննությունը կենդանիների հարկադիր սպանդի ժամանակ: Պայմանական պիտանի մսի վնասազերծման եղանակները: Մսի և մսամթերքների պահածոյացման հիգիենան և տեխնոլոգիայի հիմունքները: Երշիկային մթերքների անասնաբուծական սանիտարական փորձաքննությունը, արտադրության հիգիենան և տեխնոլոգիայի հիմունքները: Կենդանական ճարպահումքի, սննդային ենթամթերքների, էնդոկրինֆերմենտատու հումքի, արյան, աղիների և կաշվեհումքի վերամշակումը: Կաթի, կաթնամթերքի, սննդային ձվերի և ձվամթերքի անասնաբուծական սանիտարական փորձաքննությունը: Չկների հիվանդությունները և դրանց անասնաբուծական սանիտարական փորձաքննությունը: Մեղրի սանիտարական փորձաքննությունը: Բուսական սննդային մթերքների սանիտարական փորձաքննությունը: Սննդային մթերքների սանիտարական փորձաքննությունը շուկաներում:</p> | | |
| <p>Անասնաբուծական գործի կազմակերպում</p> | <p>6</p> | <p>150</p> |
| <p>Անասնաբուծական ծառայության կազմակերպչական կառուցածքը և անասնաբուծական գործի ղեկավարումը: Անասնաբուծական գործի կազմակերպումը գյուղական շրջաններում: Անասնաբուծական գործի</p> | | |

| | | |
|---|-----|------|
| կազմակերպումը քաղաքում: Արտադրական անասնաբուժական ծառայությունը գյուղատնտեսական ձեռնարկություններում: Տնտեսական հաշվարկը անասնաբուժական հիմնարկություններում: Անասնաբուժական սպասարկման կազմակերպումը: Անասնաբուժական միջոցառումների պլանավորումը: Անասնաբուժական միջոցառումների էկոնոմիկան: Տնտեսական ցուցանիշների համակարգը: Տնտեսական վնասները և նրանց հաշվարկման մեթոդիկան: Անասնաբուժական միջոցառումների արդյունավետությունը: Անասնաբուժական հսկողության կազմակերպումը: Անասնաբուժական միջոցառումների ֆինանսավորումը: Անասնաբուժական մատակարարման կազմակերպումը: Անասնաբուժական հաշվառում: Անասնաբուժական հաշվետվություն: Անասնաբուժական գործավարություն: Միջազգային անասնաբուժական կազմակերպություններ և անասնաբուժական ծառայությունը արտասահմանյան երկրներում: | | |
| Ձկների հիվանդություններ | 2 | 60 |
| Ջրավազանների տիպերը Հայաստանում: Ձկնաբուժական տնտեսությունների լճակների համաճարակաբանական բնութագիրը Հայաստանում: Ձկնային տնտեսություններում կիրառվող ընդհանուր սանիտարա-կանխարգելիչ միջոցառումները: Իխթիո-ախտաբանական հետազոտման ժամանակակից մեթոդները: Մոնոգենետիկ ծծանների կողմից հարուցվող հիվանդություններ: Ցեստոդների կողմից հարուցվող հիվանդություններ: Կլոր որդերի կողմից հարուցվող հիվանդություններ: Խեցգետնիկների կողմից հարուցվող հիվանդություններ: Նախակենդանիների կողմից հարուցվող հիվանդություններ: Ինֆուզորիանների կողմից հարուցվող հիվանդություններ: Ձկների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդություններ, պայքարի միջոցառումները դրանց դեմ: | | |
| Ուսանողի կողմից ընտրովի դասընթացներ | | |
| Տեսական ուսուցման ընդհանուր ժամաքանակը` 154 շաբաթ | 300 | 9000 |

Ծանոթություն. Յուրաքանչյուր առարկային հատկացված ժամաքանակի մեջ մտնում է լսարանային և արտալսարանային ժամաքանակը (70:30% հարաբերությամբ)

4.1. Առկա ձևով ուսուցման դեպքում լսարանային պարապմունքներին պետք է տրամադրվի յուրաքանչյուր ուսումնական դասընթացին հատկացվող ժամաքանակի 50%-ից ոչ պակասը, իսկ հեռակա ձևով ուսուցման դեպքում 10%-ից ոչ պակասը:

5. 310301 ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

դասիչ, մասնագիտություն

ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

որակավորման աստիճան

ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման
որակավորման աստիճան

հիմնական կրթական ծրագրի յուրացման ժամկետը, ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 247 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը՝ 154 շաբաթ,
- քննաշրջանները՝ 28 շաբաթ,
- պրակտիկաները՝ 28 շաբաթ,

ա/ ուսումնական 15,

բ/ արտադրական 13,

• եզրափակիչ պետական որակավորումը, ներառյալ ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը՝ 3 շաբաթ,

- արձակուրդները՝ 34 շաբաթ

Դիպլոմային աշխատանքի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկման և ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է բուհը (ֆակուլտետը), որը հաստատում է բուհի գիտական խորհուրդը:

5.2. Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթություն ունեցող անձանց համար

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման
որակավորման աստիճան

հիմնական կրթական ծրագրերի յուրացման ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում են մինչև 1 տարի՝ սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2-ով սահմանված ժամկետի նկատմամբ:

5.3. Ուսանողի ուսումնական բեռնվածքի առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ՝ ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4. Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը չպետք է գերազանցի շաբաթական 30 ժամը: Նշված ծավալում չեն ընդգրկվում ֆիզիկական կուլտուրայի և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնա-

կան տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է, բացառությամբ 9-րդ և 10-րդ կիսամյակների, որոնցից յուրաքանչյուրն ունի 9-ական շաբաթ:

5.5. Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան 160 ժամից ոչ պակաս ծավալով դասախոսների հետ պարապմունքների անցկացնելը:

5.6. Ուսումնական տարվա արձակուրդները պետք է 7-10 շաբաթ լինեն, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս՝ ձմեռային քննաշրջանից հետո:

6. 310301 ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

դասիչ, մասնագիտություն

ՍԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

որակավորման աստիճան

**ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

6.1. Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի մշակման պահանջները

6.1.1. Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա բուհն ինքնուրույն է մշակում և հաստատում Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնասիրությունը պարտադիր է, իսկ նրանց ցանկը երաշխավորված բնույթ է կրում, որը կարող է փոփոխել կամ լրացնել բուհը:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն) և ծավալները՝ դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է բուհը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25%-ից:

Ուսանողների գիտելիքի ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է բուհը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության (ստուգարքի) արդյունքով, այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացից և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակ(ների) ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40%-ը ձևավորվում է ընթացիկ առաջադիմությամբ և միջանկյան ստուգումներով, իսկ 60%-ը՝ եզրափակիչ քննության (ստուգարքի) արդյունքով:

Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր կամ գրավոր-բանավորն է: Բացառության կարգով բուհը կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց դրանք չպետք է գերազանցեն քննությունների ընդհանուր քանակի 25%-ը: Բուհի իրավունքն է ուսումնական դասընթացների եզրափակիչ ստուգման եղանակի (ստուգարք կամ քննություն) ընտրությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտագործում է իրեն նպատակահարմար գնահատման սանդղակ: Միջազգային

մասնագիտական կրթական համակարգին և ուսանողների ակադեմիական շարժունակությունն ապահովելու նպատակով ուսումնական գործընթացում գերադասելի է գիտելիքների ստացման և գնահատման վարկային (կրեդիտային) համակարգի ներդրումը և օգտագործումը: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելը կատարվում է գնահատման ավանդական համակարգով («գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար», «ստուգված», «չստուգված»):

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես դասընթացի ուսումնական բաղադրիչ և իրականացվում է այդ դասընթացին հատկացված դասաժամերի հաշվին: Հիմնական մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքի կատարելը պարտադիր է, որոնց քանակը սահմանում է բուհը:

Մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

Մասնագիտացման դասընթացների կրթաբլոկը ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկի տրամաբանված հաջորդականությունն է, որը ընտրած մասնագիտությամբ նախատեսված գործունեության բնագավառներում նպաստում է ուսանողի խոր մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Այն մասնագիտությունների գծով, որոնց անվանման մեջ առկա է անասնաբուժական սանիտարական փորձաքննություն արտահայտությունը, ընտրած բնագավառի համար շրջանավարտի պատրասման առանձնահատկությունները առաջին հերթին հաշվի են առնվում մասնագիտացման դասընթացների միջոցով: Բուհը ինքնուրույն է ընտրում իրեն համապատասխանող մասնագիտացումը և իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու մասնագիտացման դասընթացների ցանկը, կամ էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչը մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած՝ ձևվորելու նոր մասնագիտացում:

Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկի ցանկը երաշխավորական բնույթ է կրում և ուսանողի համար պարտադիր չէ, իսկ դրանց հաճախելու դեպքում կրթաբլոկին հատկացված ժամաքանակների 30%-ին վերաբերվող դասընթացներից պարտադիր է ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը:

6.1.2. Մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացնելու դեպքում բուհն իրավասու է.

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկներին հատկացված ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 10%-ի սահմաններում,

- ձևավորել հումանիտար և սոցիալ-տնտեսական դասընթացների կրթաբլոկ, որի հանրապետական բաղադրիչում նշված առարկաներից պարտադիր են. «Օտար լեզու» (ժամից ոչ պակաս ծավալով), «Հայոց լեզու և հայ գրականություն», «Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ», «Ֆիզիկական կուլտուրա», «Հայ ժողովրդի պատմություն», «Փիլիսոփայություն»: Մնացած դասընթացները կարող են ընդգրկվել ըստ բուհի հայեցողության:

Եթե դասընթացը ընդհանուր մասնագիտական կամ մասնագիտացման դասընթացների կրթաբլոկի մի մասն է կազմում, դրա համար հատկացված ժամերը վերաբաշխվում են ՀՍՏ դասընթացների վրա:

Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները հեռակա և դրսեկության ձևերով ուսումնառող ուսանողների համար կարող են իրականացվել նրանց ցանկությամբ,

- ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, անհատական ու կոլեկտիվ գործնական պարապմունքների, առաջադրանքների և սեմինարների ձևով՝ բուհի մշակած ծրագրերով, հաշվի առնելով բուհի մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունը և հակումները, որոնք կապահովեն կրթաբլոկի դասընթացների թեմատիկայի լուսաբանումը ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան,

- սահմանել ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸԲ) կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների առանձին բաժինների դասավանդման անհրաժեշտ խորությունը՝ կրթաբլոկների դասընթացների ուղղվածությանը համապատասխան և մասնագիտության առանձնահատկությունների հաշվառմամբ: ԸՄ կրթաբլոկում պարտադիր է «Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդումը: Բուհական բաղադրիչներին առանձնացված ժամաքանակները բուհի հայեցողությամբ կարող են օգտագործվել հանրապետական բաղադրիչներում ընդգրկված դասընթացների ավելի խորը դասավանդման համար,

- իրականացնել 310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտությամբ Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը կրճատված ժամկետով՝ համապատասխան ուղղվածության միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության ուսանողների համար: Ուսուցման ժամկետների կրճատումը կատարվում է մասնագիտական կրթության նախորդ աստիճանում ուսանողների ձեռք բերած գիտելիքների, հմտությունների և ունակությունների հիման վրա: Այդ դեպքում ուսուցման տևողությունը 2 (երկու) տարուց

պակաս չպետք է լինի: Կրճատված ժամկետում ուսուցումը թույլ է տրվում այն անձանց, որոնց կրթական մակարդակը կամ ընդունակությունները դրա համար համարվում են բավարար,

- առանձին դեպքերում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված 310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտության համար բուհերն իրավունք ունեն մինչև 20%-ի սահմանում փոփոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբլոկի ժամաքանակը, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 40%-ի սահմաններում:

6.2. Ուսումնական գործընթացի կադրերային ապահովման պահանջները.

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովվի գիտամանկավարժական կադրերով, որոնք որպես կանոն ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս) և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն, պետք է ունենան գիտական աստիճան և/կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորադասախոսական կազմի 50%-ից ոչ պակասը: Հիմնական հաստիքային դասախոսները և 0.25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները պետք է կազմեն ընդհանուրի 50%-ից ոչ պակասը:

6.3. Ուսումնական գործընթացի ուսումնամեթոդական ապահովման պահանջները

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում (կենդանական և բուսական ծագման մթերքների և հումքի փորձաքննություն, կենդանիների ախտորոշիչ հետազոտություններ, արյան, մեզի, արտաթորանքի լաբորատոր ստուգումներ, դեղանյութերի և կենսապատրաստուկների ներարկումներ, վիրահատական միջամտություններ, ախտահանության, դեզինսեկցիայի և դեռատիզացիայի եղանակներ), ներառյալ որպես պարտադրի բաղադրիչ՝ համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների կատարում: Պարտադրի պահանջ է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովում է

բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը տարբեր ինֆորմացիոն աղբյուրներ, ներառյալ Internet-ը:

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովվի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչների (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցումների առկայությամբ, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով, նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ և չափորոշիչներով:

6.4. Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող բուհը պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովում է օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների և միջդասընթացային պատրաստման բոլոր ձևերի և ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

6.5. Պրակտիկաների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

6.5. Պրակտիկաների կազմակերպման պահանջները

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով անասնաբուժական բնագավառի կազմակերպարավական տարբեր ձևերի անասնաբուժական սպասարկման կայաններում, անասնապահական տնտեսություններում, սահմանային հսկիչ կետերում, անասնաբուժական սանիտարական փորձաքննության լաբորատորիաներում, կենդանական ծագման մթերքների ու հումքի ստացման և իրացման կետերում, կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական (կլինիկական) պրակտիկաներ: Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր

բաղադրիչն է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կազմակերպվում է այն հաշվով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած փորձառությունը օգտագործել իր դիպլոմային աշխատանքը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղվում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկացումը, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Պրակտիկան կարող է կազմակերպվել նաև որոշակի կազմակերպությունում՝ նախապես կազմված անհատական ծրագրով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում: Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում բուհը (ֆակուլտետը) այն կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազայի վրա, եթե այն հագեցված է ժամանակակից սարքավորմամբ և ծրագրային միջոցներով:

7. 310301 ԱՆԱՍՆԱԲՈՒԺՎԱԿԱՆ ՍԱՆԻՏԱՐԱՎԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

դասիչ, մասնագիտության անվանում

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

7.1. Շրջանավարտը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշիչի թ.1.2 կետում նշված որակավորմանը համապատասխանող խնդիրները:

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավոր պետք է.
որակավորման աստիճան

ա/ հունանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում՝

- իմանա ՋՅ Սահմանադրության և իր բնագավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հաղորդակցվի երկու օտար լեզուներով,
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- իմանա հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքագիտական զարգացումները,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային, իմանա դրա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները,
- գիտենա հոգեբանության և մանկավարժության տարրերը,
- ծանոթ լինի ժամանակակից փիլիսոփայական ուղղություններին, գիտենա կեցության մասին գիտության հիմնադրույթները, նյութականի և վերացականի հասկացությունները, մատերիայի կազմակերպման ձևերը, հետևի սոցիալական գլոբալ զարգացումներին,
- գիտենա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրո- և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

բ/ բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում՝

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժինների մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին,
- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին, կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ,

գ/ մասնագիտական գործունեության բնագավառում՝

- տիրապետի կենդանական և բուսական ծագման մթերքների և հումքի անասնաբուժասանիտարական փորձաքննության մեթոդներին,

- գիտենա անասնաբուժական և բուսաբուժական մթերքների ապրանքագիտական և ստանդարտացման եղանակները,
- տիրապետի գյուղատնտեսական կենդանիների և թռչունների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների ախտորոշման, նրանց դեմ պայքարի ու կանխարգելման միջոցառումների կազմակերպման ու անցկացման մեթոդներին,
- կարողանա անցկացնել սանիտարական միջոցառումներ կենդանական ծագման մթերքի և հումքի ստացման ու իրացման վայրերում:

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի հատուկ պատրաստությանը վերաբերվող պահանջները սահմանում է տվյալ մասնագիտացումն առաջադրող բուհը ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչներ մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցված, որոնք ՀՀ ԿԳՆ-ում մասնագիտացումը հաստատելուց հետո միասնական են դառնում այլ բուհերի համար, բխում են մասնագիտացման կրթաբլոկի բովանդակությունից և տվյալ մասնագիտացմամբ մասնագետներ պատվիրած կազմակերպության գործառնություններից:

Նշված փորձառությունները ներառում են.

- հետազոտական աշխատանքներ վարելու, վերացական տրամաբանական մտածողության, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդները կիրառելու և քննադատական վերլուծության ունակություններ:
- անձանոթ պայմաններում առաջացած ոչ կոնստրուկտիվ հիմնահարցերի բացահայտման, հաղթահարման և վերջնական լուծման, սեղմ ժամանակացույցով աշխատանքներ կազմակերպելու ընդունակություն,
- մասնագիտական գործունեության բնագավառում նորանուծությունների նկատմամբ ընկալունակության ցուցաբերում,

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի՝ մարդկանց հետ որակավորման աստիճան

աշխատելու փորձառությունը ենթադրում է նրա ունակությունները՝

- այլ անձանց հետ փոխգործակցելու, կոլեկտիվում նրանց հետ հաղորդակցվելու,
- խնդիրներ ձևավորելու և դրանք ենթակառուցելու պատվիրակելու,
- մարդկանց ստեղծագործական աճի ձգտումը խրախուսելու և զարգացումն ապահովելու,
- ծագած տարաձայնությունները և բախումները լուծելու,
- տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու,
- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու,

- տրաբնույթ և տարասեռ մշակութային միջավայրում աշխատելու:

Անասնաբուժական սանհիտարական փորձաքննության բակալավրի` ինֆորմացիայի հետ աշխատելու փորձառությունը պահանջում է պարտադիր հմտություններ`

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու,
- լեզվային և մշակութային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծորեն ընկալելու,
- բանավոր, տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիան որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

Ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով Անասնաբուժական սանհիտարական փորձաքննության բակալավրը պետք է ծանոթ լինի տվյալների մշակման երկուսից ոչ պակաս համակարգերի, համակարգչային և բազմաօգտագործման տեղային ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (www), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

Անասնաբուժական սանհիտարական փորձաքննության բակալավրը պետք է հասկանա որակավորման աստիճան

իր մասնագիտության էությունը և սոցիալական նշանակալիությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետբուհական և լրացուցիչ կրթություն ստանալու կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

7.2 Անասնաբուժական սանհիտարական փորձաքննության բակալավրի եզրափակիչ որակավորման աստիճան

պետական որակավորման պահանջները

7.2.1. 310301 Անասնաբուժական սանհիտարական փորձաքննություն մասնագիտությամբ դասիչ, մասնագիտության անվանում

Անասնաբուժական սանհիտարական փորձաքննության բակալավրի եզրափակիչ

որակավորման աստիճան

պետական որակավորումը ներառում է` ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պաշտպանությունը և պետական քննության հանձնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական և գործնական պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

7.2.2. Անասնաբուժական սանհիտարական փորձաքննության բակալավրի ավարտական

որակավորման աստիճան

որակավորման (դիպլոմային) աշխատանքին ներկայացվող պահանջները.

310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտությամբ
դասիչ, մասնագիտության անվանում

Անասնաբուժական սանիտարական փորձաքննության բակալավրի ավարտական

որակավորման աստիճան

որակավորման (դիպլոմային) աշխատանքն ավարտուն մի մշակում է, որը կատարված է մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և նպատակ ունի ամրապնդել և ընդլայնել շրջանավարտի տեսական և գործնական գիտելիքները անասնապահության (ներառյալ թռչունները, գազանները, մեղուները և ձկները), կենդանիների վարակիչ և ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելման (այն իրականացվում է ավտորոշիչ, բուժականխարգելիչ միջոցառումներով) արտադրական, տեխնոլոգիական և կազմակերպչական գործունեության, անասնաբուժասանիտարական տեսակետից կենդանական ծագման բարձրորակ մթերքի և հումքի արտադրության և այլ ոլորտներում:

Բովանդակային առումով ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքը պետք է՝

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսագիտական կամ փորձարարական հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,
- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական և համակարգային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ բնագավառի հիմնահարցերի լուծման կատարելագործման վերաբերյալ,
- կրի ստեղծագործման բնույթ՝ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ,
- բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու ֆերմերային և գյուղացիական անասնապահական տնտեսություններում, տոհմային կայաններում, անասնաբուժական տեղամասերում, սահմանային հսկիչ կետերում, սպանդանոցներում, կենդանական ծագման մթերքի և հումքի մթերման պահեստներում և վաճառքի կետերում, անասնաբուժական լաբորատորիաներում:
- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,
- արտացոլի շրջանավարտի ունակությունը օգտագործելու տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատել բնագավառի նորմատիվ-իրավական ակտերի հետ,

- ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք և 60-70 էջ համակարգչային շարվածքի ծավալ:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքների թեմատիկան սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն՝ **Անասնաբուժական սանիտարական փորձաքննության առաջնահերթ և հրատապ հարցերը և անասնաբուժության հիմնական (կլինիկական) առարկաները**, հաշվի առնելով բուհի (ֆակուլտետի) ընտրած մասնագիտացումները և ընտրովի դասընթացների բովանդակությունը ըստ կրթաբլոկների.

1. Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն,
2. Ընդհանուր անասնաբուժություն

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի կառուցվածքում պետք է ներառվեն հետևյալ բաժինները՝

1. Ներածություն,
2. Գրականության տեսություն,
3. Սեփական հետազոտություններ,
4. Եզրակացություններ,
5. Առաջարկություններ:

7.2.3. Պետական քննությանը ներկայացվող պահանջները.

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատում բուհի գիտական խորհուրդը: Նրանում պարտադիր կարգով ներառվում են հարցեր մասնագիտության հետևյալ հիմնական ուսումնական դասընթացներից՝

1. Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն,
2. Անասնաբուժական մթերքների ապրանքագիտություն և ստանդարտացում,
3. Անասնաբուժական սանիտարիա,
4. Թունաբանություն,
5. Անասնաբուժական գործի կազմակերպում,
6. Ներքին ոչ վարակիչ հիվանդություններ,
7. Վիրաբուժություն,
8. Ծննդագիտություն և գինեկոլոգիա,
9. Համաճարակաբանություն և ինֆեկցիոն հիվանդություններ,
10. Մակաբուժաբանություն և ինվազիոն հիվանդություններ:

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը առընթեր՝ 310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննություն մասնագիտությունների պետական կրթական

մասնագիտությունների ուղղությունը

չափորոշիչները մշակող գիտամեթոդական հանձնաժողովի աշխատանքային խումբը

| | |
|--|----------------------------|
| <u>Անասնաբուժ. բժշկ. և անասնաբուժ. ֆակ. դեկան, անաս. գիտ. դոկտոր</u> | <u>Ա. Վ. Վարդանյան</u> |
| <u>Անասնաբուժ. սան, փորձ. և գոռհիգ. ամբիոնի վարիչ, անասնաբուժ. գիտ. դոկտոր</u> | <u>Վ. Վ. Աբրահամյան</u> |
| <u>Համաճարակ. և մակաբուժ. ամբիոնի վարիչ, անաս. գիտ. դոկտոր</u> | <u>Ս. Լ. Գրիգորյան</u> |
| <u>Թերապիայի ամբիոնի վարիչ, անաս. գիտ. դոկտոր</u> | <u>Ա. Վ. Մանասյան</u> |
| <u>Մորֆոլոգիայի և ֆիզիոլոգիայի ամբիոնի դոցենտ, անաս. գիտ. թեկնածու</u> | <u>Գ. Ռ. Համբարձումյան</u> |

310301 Անասնաբուժական սանիտարական փորձաքննության

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտության պետական կրթական չափորոշիչը քննարկվել և հաստատվել է ՀՀ ԿԳՆ _____ պետական կրթական չափորոշիչները մշակող

մասնագիտությունների ուղղությունը

գիտամեթոդական հանձնաժողովի 2009թ. _____ -ի նիստում (արձանագրության թ. _____):

Հանձնաժողովի նախագահ՝

ՀՊԱՀ-ի ռեկտոր, դոկտոր պրոֆեսոր
պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

Ա. Պ. Թարվերդյան
անուն, ազգանուն

« ____ » _____ 2009թ.

Համաձայնեցված է.

ՀՀ ԿԳՆ բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության պետ՝

_____ գիտ. աստիճանը, կոչումը

Ռ. Գասպարյան
անուն, ազգանուն

« ____ » _____ 2009թ.

Երաշխավորվող մասնագիտացումների ցանկ

| Դասիչ | Մասնագիտացման մեջ ընդգրկված ուսումնական դասընթացների անվանումները | Ժամաքանակները, ժամ |
|----------------------|--|--------------------|
| ՄԴ.Բ.01 | Թ.1. Մասնագիտացում՝ Անասնաբուժ. սանիտ. փորձագետ | _____ |
| ՄԴ.Բ.01 ₁ | | _____ |
| ՄԴ.Բ.01 ₂ | Ուսումնական դասընթացները՝ | _____ |
| ՄԴ.Բ.01 ₃ | (5-8 անվանում) | _____ |
| ՄԴ.Բ.02 | Թ.2. Մասնագիտացում՝ ընտանի մանր, էկզոտիկ կենդանիների և թռչունների հիվանդությունների գծով | _____ |
| ՄԴ.Բ.02 ₁ | | _____ |
| ՄԴ.Բ.02 ₂ | Ուսումնական դասընթացները՝ | _____ |
| ՄԴ.Բ.02 ₃ | (5-8 անվանում) | _____ |
| ՄԴ.Բ.03 | Թ.3. Մասնագիտացում՝ _____ մասնագիտացման անվանումը | _____ |
| ՄԴ.Բ.03 ₁ | | _____ |
| ՄԴ.Բ.03 ₂ | Ուսումնական դասընթացները՝ | _____ |
| ՄԴ.Բ.03 ₃ | (5-8 անվանում) | _____ |